



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2037
9-61

18207

7
34



9.11.11
11.11.11

203.7

9-61


Գ Ի Բ Բ

48.

Ա Ղ Օ Թ Ի Ց

ՈՐ ԿՈՉԻ

ԿԻՊՐԻԱՆՈՍ




ՎԱՍՆ

ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳ ՊԱՏԱՀԱՐԱՑ

ՈՐԲ ԳԱՆ

Ի ՎԵՐԱՑ ՄԱՐԴՈՑ



Երբորք Տպագրութիւն



ՂԱԼԱԹԻԱ

ՏՊԱԳՐ. Ռ. Յ. ԳԻՒՐԳՃԵԱՆ

— 1870 —

24006


30645-43

222-ԱՆ

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ
Տ. Տ. ՄԿՐՏԶԻ
ՄԻԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

13541-58

ԱՐԳԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻԻՔ
ԳՐԱՎԱՃԱՌ ՅՈՎԱԵՓԱՅ ԳԱՅԱՅԵԱՆ



ԱՂՈԹԻ ՊԻՏԱՆԻՔ

Ի Ի Ր Ա Ք Ա Ն Չ Ի Ի Ր Ա Ն Չ Ի Ն

ՀԱՆԱՏԱՅՆԵՆՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

Արարեալ

Սրբայն ներսիս շնորհալոյ
Հայոց պաթուղիկոսի



ՀԱՆԱՏՈՎ խոստովանիմ եւ եր-
կիր պագանսեմ քեզ Հայր եւ Որդի

եւ սուրբ Հոգի, անեղ եւ անմահ
 բնութիւն, արարիչ հրեշտակաց եւ
 մարդկան եւ ամենայն եղելոց. ու
 դորմեա քո արարածոց, եւ ինձ
 բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ, եւ եր-
 կիր պագանեմ քեզ՝ անբաժանելի
 լոյս, միասնական սուրբ Երրորդու-
 թիւն եւ մի Աստուածութիւն, ար-
 րարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի.
 հալածեա 'ի հոգւոյ իմմէ զխաւար
 մեղաց եւ անգիտութեան, եւ լու-
 սաւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայս-
 միկ աղօթել քեզ 'ի հաճոյս, եւ ըն-
 դունել 'ի քէն զինդրուածս իմ. եւ
 ողորմեա քո արարածոց, եւ ինձ
 բազմամեղիս:

Հայր երկնաւոր Աստուած ճշմա-
 րիտ՝ որ առաքեցեր զՈրդիդ քո սի-



բելի 'ի խնդիր մուրեալ ոչխարին,
 մեղայ յերկինս եւ առաջի քո. ըն-
 կալ զիս որպէս զանառակ որդին,
 եւ զգեցո ինձ զպատմութեանն զա-
 ռաջին՝ զոր մերկացայ մեղօք. եւ
 ողորմեա քո արարածոց, եւ ինձ
 բազմամեղիս:

Որդի Աստուծոյ Աստուած ճշմա-
 րիտ՝ որ խոնարհեցար 'ի հայրական
 ծոցոյ՝ եւ առեր մարմին 'ի սրբոյ
 կուսէն Մարիամայ վասն մերոյ փր-
 կութեան. խաչեցար, թաղեցար եւ



յարեար 'ի մեռելոց' եւ համբարձար
 փառօք առ Հայր, մեղայ յերկինս
 եւ առաջի քո. յիշեա զիս որպէս
 զաւագակն՝ յորժամ՝ դաս արքայու-
 թեամբ քով. եւ ոգորմեա :

Հոգի Աստուծոյ Աստուած ճըշ-
 մարիտ՝ որ իջեր 'ի Յորդանան եւ
 'ի վերնատունն, եւ լուսաւորեցեր
 զիս մկրտութեամբ սուրբ աւագա-
 նին, մեղայ յերկինս եւ առաջի քո.

մաքրեա զիս վերստին Աստուածա-
 յին հրով քով որպէս հրեղէն լեզ-



ուօք սուրբ զառաքեալսն. եւ :

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մը-
 տօք իմովք, հոգւով եւ մարմնով
 իմով. մի՛ յիշեր զմեզս իմ զառա-
 ջինս վասն անուանդ քում սրբոյ. եւ :

Տեսող ամենայնի՝ մեղայ քեզ խոր-
 հրդով բանիւ եւ գործով. Ինչեա

դձեռագիր յանցանաց իմոց, եւ դըրեա զանուն իմ 'ի դպրութեան կենաց եւ ողորմեա :



Քննող 'գաղտնեաց' մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. թողութիւն չընորհեա մեղաւորիս, զի 'ի ծննդենէ սուրբ Աւագանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո զգայարանօք իմովք, եւ ամենայն անդամօք մարմնոյս . եւ :

Ամենախնամ Տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ ոչ եւս հայել յարատ, եւ ականչաց իմոց՝ ոչ ակտորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն . եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, եւ ռախից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան . այլ ուղեա զչարժումս սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի . եւ ողորմեա :


Հուր կենդանի Քրիստոս՝ զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորւոքեա յանձն իմ . զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ ըզխիղճ մտաց իմոց, եւ մաքրեսցէ ըզմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ

զոյս գիտութեան քո 'ի սրտի ի-
մում. եւ ողորմեա :

Իմաստութիւն շօր Յիսուս՝ տուր
ինձ իմաստութիւն, զբարիս խոր-
հել եւ խօսել եւ գործել առաջի
քո յամենայն ժամ. 'ի չար խոր-
հրդոց՝ 'ի բանից եւ 'ի գործոց փր-
կեա զիս. եւ ողորմեա :

Կամեցող բարեաց Տէր կամարար՝
մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ
գնալ. այլ առաջնորդեա ինձ լինիլ
միշտ ըստ կամաց քոց բարետիրաց .
եւ ողորմեա :

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զար-
քայութիւն քո զոր խոստացար սի-
րելեաց քոց . եւ զօրացո զսիրտ իմ
ատել զմեզս, եւ սիրել զքեզ միայն,
եւ առնել զկամս քո . եւ ողորմեա :
Խնամող արարածոյ՝ պահեա նը-



չանաւ Թաչի քո զհոգի եւ զմարմին
իմ 'ի պատրանաց մեղաց, 'ի փոր-
ձութեանց զիւաց եւ 'ի մարդոց ա-
նիրաւաց, եւ յամենայն վտանգից
հոգւոյ եւ մարմնոյ . եւ ողոր :

Պահապան ամենայնի Քրիստոս՝
աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի
տուէ եւ 'ի գիշերի . 'ի նստել 'ի տան,
'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել եւ
'ի յառնել՝ զի մի՛ երբէք սասանե-
ցայց . եւ ողորմեա :

Աստուած իմ՝ որ բանաս զձեռն
քո, եւ շուս զամենայն արարածս



ողորմութեամբ քով, քեզ յանձն
առնեմ զանձն իմ. դու հոգա եւ
պատրաստեա զպէտս հոգւոյ եւ
մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչեւ
յաւիտեանս. եւ ողորմեա :

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս
'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի
սովորութիւն. եւ բեւեռեա 'ի հոգի

իմ զսոսկալի օր մահուն, եւ զեր-
կիւղ գեհենին, եւ զսէր արքայու-
թեանն, զի զղջացայց 'ի մեղաց, եւ
գործեցից զարդարութիւն. եւ ողոր :

Աղբիւր անմահութեան՝ աղբե-
րայո 'ի սրտէ իմմէ զարտասուս ա-
պաշխարութեան որպէս պոռնկին.
զի լուացից զմեզս անձին իմոյ յա-
ռաջ քան զելանելն իմ յաշխար-
հէս. եւ ողորմեա :

Պարգեւիչ ողորմութեան՝ պար-
դեւեա ինձ ուղղափառ հաւատով
եւ բարի գործով, եւ սուրբ մարմ-
նոյ եւ արեան քո հաղորդութեամբ
զալ առ քեզ. եւ ողոր :

Բարերար Տէր՝ հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս քաղցրու-
թեամբ աւանդել զհոգի իմ, եւ ան-
խռով անցուցանել ընդ չարութիւն



այսոցն՝ որ են 'ի ներքոյ երկնից .
 և ողորմեա քո արա :

Հոյս ճշմարիտ Քրիստոս՝ արժա-
 նաւորեա զհոգի իմ ուրախութեամբ
 տեսանել զդոյս փառաց քոց 'ի կոչ-
 ման աւուրն , և հանգչել յուսով
 բարեաց յօթեւանս արդարոց մին-
 չեւ յօր մեծի զալստեան քո . և :



Գատաւոր արդար՝ յորժամ գաս
 փառօք հօր գատել զկենդանիս և
 զմեռեալս , մի՛ մտանել 'ի գատաս-
 տան ընդ ծառայի քում . այլ փրկ-
 կեա զիս 'ի յաւիտենական հրոյն ,
 և լսելի արա ինձ զերանաւէտ կո-
 չումն արդարոց յերկնից արքայու-
 թիւնդ . և ողորմեա :

Ամենողորմ աէր՝ ողորմեա ամե-
 նայն հաւատացելոց 'ի քեզ , իմոց

156
 7006
 24006
 13541-50

և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց չնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն որ առ իս յանդանաց, և դարձո զնոսա՝ ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին և ողորմեա :




Փառաւորեալ Տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա

՚ի բարի զխնդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և Յովնաննու Մկրտչին, և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց՝ Մարգարէից՝ Վարդապետաց՝ Մարտիրոսաց՝ Հայրապետաց՝ Ճգնաւորաց՝ Կուսանաց՝ Միանձանց, և ամենայն Սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց : Եւ քեզ վառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից ամէն :





ԱՂՕԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ



ՍՆՍԿԻԶԲՆ Սատուած՝ անեղ
Սատուած՝ անխմանալի Սատուած՝
անպարագրելի Սատուած՝ անծին
Սատուած՝ ամենարքայ Սատուած՝
ամենարարիչ Սատուած՝ ամենարիլի
Սատուած՝ ամենաղէտ Սատուած՝ ա-
մենարազ Սատուած՝ ամենադատ
Սատուած՝ ամենաուրեմ Սատուած՝ ա-
մենաղբիւր Սատուած՝ ամենարմատ

Աստուած՝ ամենարձակ Աստուած՝ ամենաայց
 Աստուած՝ ամենայցեղու Աստուած՝ ամենազոյ
 Աստուած՝ ամենասաց Աստուած՝ ամենարթուն
 Աստուած՝ ամենարաւ Աստուած՝ ամենարաւ
 Աստուած՝ ամենարարձրեալ Աստուած՝ ամենարերկրեալ
 Աստուած՝ ամենարաւական Աստուած՝ ամենարարի
 Աստուած՝ ամենարոյժ Աստուած՝ ամենարուժիչ
 Աստուած՝ ամենարուզիս Աստուած՝ ամենարաշխ
 Աստուած՝ ամենարաշխող Աստուած՝ ամենազով
 Աստուած՝ ամենազովելի Աստուած՝ ամենազովեալ
 Աստուած՝ ամենազութ Աստուած՝ ամենազրթած
 Աստուած՝ ամենազտիչ Աստուած՝ ամենազանձ
 Աստուած՝ ամենազորով Աստուած՝ ամենայար
 Աստուած՝ ամենազատաւոր Աստուած՝

ամենադաւանեալ Աստուած՝ ամենազիր
 Աստուած՝ ամենազարման Աստուած՝ ամենազարմանիչ
 Աստուած՝ ամենազերիչ Աստուած՝ ամենաերբ
 Աստուած՝ ամենազօր Աստուած՝ ամենազօրեղ
 Աստուած՝ ամենազարդ Աստուած՝ ամենազարդար
 Աստուած՝ ամենազարդարիչ Աստուած՝ ամենազեղ
 Աստուած՝ ամենազիւն Աստուած՝ ամենաէն
 Աստուած՝ ամենաէակ Աստուած՝ ամենաերկինք
 Աստուած՝ ամենաառեր Աստուած՝ ամենազօր
 Աստուած՝ ամենամեծ Աստուած՝ ամենամաքուր
 Աստուած՝ ամենաբնարող Աստուած՝ ամենաբնդունակ
 Աստուած՝ ամենաբնդունող Աստուած՝ ամենաբղձուն
 Աստուած՝ ամենաթագ Աստուած՝ ամենաթագաւոր

ւոր Աստուած՝ ամենաժառանգ Աստուած՝ ամենախիշխան Աստուած՝ ամենախիշխող Աստուած՝ ամենախիմաստ Աստուած՝ ամենախրաւ Աստուած՝ ամենալոյս Աստուած՝ ամենալիր Աստուած՝ ամենալրումն Աստուած՝ ամենախնամ Աստուած՝ ամենախորհումող Աստուած՝ ամենախօս Աստուած՝ ամենախրատ Աստուած՝ ամենախորին Աստուած՝ ամենախորհուրդ Աստուած՝ ամենաժազումն Աստուած՝ ամենաժառաղ Աստուած՝ ամենակալ Աստուած՝ ամենակարող Աստուած՝ ամենակիր Աստուած՝ ամենակրող Աստուած՝ ամենակայծ Աստուած՝ ամենակատար Աստուած՝ ամենակոչ Աստուած՝ ամենակէտ Աստուած՝ ամենահաս Աստուած՝ ամենահասու Աստուած՝ ամենահաս-

տատ Աստուած՝ ամենահաստատիչ Աստուած՝ ամենաձիր Աստուած՝ ամենաձեռն Աստուած՝ ամենաձեռնուտ Աստուած՝ ամենաղեկավար Աստուած՝ ամենաղամբար Աստուած՝ ամենաճարակ Աստուած՝ ամենաճաստաղայթ Աստուած՝ ամենաճշմարիտ Աստուած՝ ամենամաքրիչ Աստուած՝ ամենամարդ Աստուած՝ ամենամարդիչ Աստուած՝ ամենայարոցց Աստուած՝ ամենայառաջ Աստուած՝ ամենուրեք Աստուած՝ ամենայորդոր Աստուած՝ ամենայորդորիչ Աստուած՝ ամենայոյս Աստուած՝ ամենաչարժ Աստուած՝ ամենաչուրջ Աստուած՝ ամենաչահ Աստուած՝ ամենաչահաւոր Աստուած՝ ամենաչէն Աստուած՝ ամենաուղորդ Աստուած՝ ամենաուղիղ Աստուած՝ ամենաու-

Տեղ Ատուած՝ ամենառուզ Ատուած՝ ամենաչափող Ատուած՝ ամենապատիւ Ատուած՝ ամենապարգեւ Ատուած՝ ամենասաստիչ Ատուած՝ ամենապարզ Ատուած՝ ամենապարզիչ Ատուած՝ ամենապահ Ատուած՝ ամենապահող Ատուած՝ ամենապար Ատուած՝ ամենապարզող | Ատուած՝ ամենապայծառ Ատուած՝ ամենապարոյր Ատուած՝ ամենաջահ Ատուած՝ ամենաջան Ատուած՝ ամենաջամբ Ատուած՝ ամենառատ Ատուած՝ ամենառատացուցիչ Ատուած՝ ամենասրբիչ Ատուած՝ ամենասահման Ատուած՝ ամենասահմանիչ Ատուած՝ ամենասանձ Ատուած՝ ամենասանձող Ատուած՝ ամենասիրեռ Ատուած՝ ամենատուն Ատուած՝ ամենաւար-

ժիչ Ատուած՝ ամենաւարիչ Ատուած՝ ամենամարբիչ Ատուած՝ ամենաւայելուչ Ատուած՝ ամենաւտէր Ատուած՝ ամենաւիրող Ատուած՝ ամենատեղ Ատուած՝ ամենատու Ատուած՝ ամենատուն Ատուած՝ ամենատես Ատուած՝ ամենատեսուչ Ատուած՝ ամենատիւ Ատուած՝ ամենարարուն Ատուած՝ ամենարամից Ատուած՝ ամենացող Ատուած՝ ամենացայտ Ատուած՝ ամենացայդ Ատուած՝ ամենացընձութիւն Ատուած՝ ամենացանկ Ատուած՝ ամենացանկալի Ատուած՝ ամենաւիտաբ Ատուած՝ ամենաւիտալ ամենաւիտալող Ատուած՝ ամենաւիտալեալ Ատուած՝ ամենաւիտալիչ Ատուած՝ ամենաւիտյթ Ատուած՝ ամենաւիրկող Ատուած՝ ա-

մենափրկիչ Աստուած՝ ամենաքսե
 Աստուած՝ ամենաքաւիչ Աստուած՝
 ամենաքարոզ ամենաքարոզիչ Աստ-
 ուած՝ անճառ Աստուած՝ անճառ-
 արքայ Աստուած՝ անճառարքայու-
 թիւն Աստուած՝ անճառաղատու-
 թիւն Աստուած՝ անճառաղբիւր Աստ-
 ուած՝ անճառարարիչ Աստուած՝ ան-
 ճառ ապէնիազ Աստուած՝ անճառ-
 արիի Աստուած՝ անճառահաւոր
 Աստուած՝ անճառախոր Աստուած՝
 անճառարարի Աստուած՝ անճառա-
 բաց Աստուած՝ անճառաբուղիս Աստ-
 ուած՝ անճառաղուծ Աստուած՝ ան-
 ճառազօր Աստուած՝ անճառիմաստ
 Աստուած՝ անճառալուր Աստուած՝
 անճառածագ Աստուած՝ անճառա-
 զով Աստուած՝ անճառողորմ Աստ-
 ուած՝ անճառաչափ Աստուած՝ ան-

ճառապատիւ Աստուած՝ անճառա-
 լիւն Աստուած՝ անճառափառք Աստ-
 ուած՝ անճառափայլ Աստուած՝ ան-
 ախտ Աստուած՝ անեղբ Աստուած՝ ա-
 նեղծ Աստուած՝ անըմբռնելի Աստ-
 ուած՝ անժամանակ Աստուած՝ ան-
 լուելի Աստուած՝ անխարդախ Աստ-
 ուած՝ անծայր Աստուած՝ անկեաղ
 Աստուած՝ անհասանելի Աստուած՝
 անդօղելի Աստուած՝ անմեկնելի
 Աստուած՝ անյիշաչար Աստուած՝
 աննինջ Աստուած՝ անչարժ Աստ-
 ուած՝ անոխակալ Աստուած՝ ան-
 պատմելի Աստուած՝ անկոխելի Աստ-
 ուած՝ աննեղելի Աստուած՝ անօրի-
 նակ Աստուած :

Բարի Աստուած՝ բարեփիտ Աստ-
 ուած՝ բարի ընտրիւն Աստուած՝
 բարնաց բարի Աստուած՝ բարե-

դու թ Աստուած՝ բարեբաշխ Աստուած՝ բարեբարոյ Աստուած՝ բարեխորհուրդ Աստուած՝ բարեաց պարգեւող Աստուած՝ բարեաւէր Աստուած :

Գովեալ Աստուած՝ գերիզերոյ Աստուած՝ գերազարդ Աստուած՝ գոհարանեալ Աստուած՝ գերապանծ Աստուած՝ գեղեցիկ Աստուած՝ գերադոյն Աստուած՝ գոյացուցիչ Աստուած :

Դատաւոր Աստուած՝ դատաւորաց զէտ Աստուած՝ դիտապետ Աստուած՝ դասաւորիչ Աստուած՝ դաւանեալ Աստուած՝ դասուց զերնոց Աստուած՝ դեղ կենաց Աստուած՝ դրախտ Աստուած՝ դաստիարակող Աստուած :

Երրորդութիւն Աստուած՝ եր-

կինք Աստուած՝ երկնաւորաց Աստուած՝ երկրաւորաց Աստուած :

Զօրաւոր Աստուած՝ զօրեղ Աստուած՝ զուարթնոց Աստուած՝ զարգարող Աստուած՝ զարմանք Աստուած՝ զարմանալի Աստուած՝ զարհուրելի Աստուած՝ զարդազին Աստուած :

Էրեակ և և մի Աստուած՝ էրանեալ Աստուած՝ էական Աստուած՝ էացուցիչ Աստուած՝ էութիւն Աստուած :

Թագաւորաց Աստուած՝ թաքեալ Աստուած՝ թողիչ մեղաց Աստուած՝ թողելոց յարութիւն Աստուած՝ թըշնամեաց սատակիչ Աստուած :

Ժառանգութիւն Աստուած՝ ժամանակեալ Աստուած՝ ժամանող Աստուած՝ ժամանակաց Աստուած :

Ի սկզբանէ Աստուած՝ ինքնակամ
 Աստուած՝ ինքնապոյ Աստուած՝ ինք-
 նակալ Աստուած՝ ինքնատար Աստ-
 ուած՝ ինքնակարող Աստուած՝ ինք-
 նիշխան Աստուած՝ իշխող Աստուած՝
 'ի բարձունս Աստուած՝ իմանալի
 Աստուած :

Ըոյս Աստուած՝ ըոյս անստուեր
 Աստուած՝ ըոյս թափանցիկ Աստ-
 ուած՝ լուսազգեստ Աստուած՝ լու-
 սաւորիչ Աստուած՝ լուսազարդ Աստ-
 ուած՝ լուսատու Աստուած՝ լուսա-
 ճեմ Աստուած՝ լսող Աստուած՝ լի-
 ութիւն Աստուած՝ լցուցիչ Աստուած :

Խոր անքննին Աստուած՝ խաղա-
 ղութիւն Աստուած՝ խաղաղարար
 Աստուած՝ խնամող Աստուած՝ խնա-
 միչ Աստուած՝ խրատիչ Աստուած՝
 խանդաղատող Աստուած՝ խորհուրդ

Աստուած՝ խորհրդապետ Աստուած՝
 խնդրուած Աստուած՝ խորհրդազէտ
 Աստուած՝ խնդրող Աստուած՝ խո-
 նարհ Աստուած :

Ծագումնս Աստուած՝ ծնող Աստ-
 ուած՝ ծագող Աստուած՝ ծարաւե-
 լոց Աստուած՝ ծանուցեալ Աստուած՝
 ծանուցիչ Աստուած՝ ծառայից աէր
 Աստուած՝ ծածկատես Աստուած՝
 ծածկադէտ Աստուած՝ ծայր Աստ-
 ուած :

Կենդանի Աստուած՝ կենդանա-
 րար Աստուած՝ կենդանատու Աստ-
 ուած՝ կենդանացուցիչ Աստուած՝
 կերակրող Աստուած՝ կամարար Աստ-
 ուած՝ կեանք Աստուած՝ կամեցող
 բարեաց Աստուած՝ կատարեալ Աստ-
 ուած՝ կառավարող Աստուած՝ կու-
 բաց լուսատու Աստուած :

Հայր Աստուած՝ հօր որդի Աստուած՝ հոգի սուրբ Աստուած՝ հատա Աստուած՝ համերց լեզուատու Աստուած՝ հողեոց ազատիչ Աստուած՝ հրածորան Աստուած՝ հրբաւիրող Աստուած՝ հինաւուրց Աստուած՝ հարուստ Աստուած՝ հանուրց Աստուած՝ հաւատարիմ Աստուած :

Չայն Աստուած՝ ձայնող Աստուած՝ ձեռնտու Աստուած՝ ձայնից լսող Աստուած՝ ձիր Աստուած՝ ձիրբաբաշխ Աստուած :

Ղեկավար Աստուած՝ ղեկապետ Աստուած՝ զամպար Աստուած :

Ճշմարիտ Աստուած՝ ճշմարտութիւն Աստուած՝ ճշմարտասէր Աստուած՝ ճարտարապետ Աստուած՝ ճանադայթ Աստուած՝ ճառագայթեալ Աստուած՝ ճոխ Աստուած՝ ճաշակ

Աստուած՝ ճար Աստուած՝ ճանապարհ կենաց Աստուած՝ ճանապարհբարեաց Աստուած՝ ճառ Աստուած՝ ճոռոմ Աստուած :

Մեծարեալ Աստուած՝ մեծապատիւ Աստուած՝ մաքրիչ Աստուած՝ մաքրութիւն Աստուած՝ մաքրող Աստուած՝ մահու լուծանող Աստուած՝ մեղաւորաց դարձ Աստուած :

Յայտնութիւն Աստուած՝ յաւիտեան Աստուած՝ յաւիտենից Աստուած՝ յարութիւն Աստուած՝ յուսացելոց Աստուած՝ յուսադրող Աստուած՝ յարուցիչ Աստուած՝ յառաջ Աստուած :

Կեղելոց լոյս Աստուած՝ նորահրաշ Աստուած՝ նաւապետ բարի Աստուած :

Շնորհ Աստուած՝ շնորհատու Աստուած՝ շուրջ Աստուած՝ շուրջանակի

Ատուած՝ շնորհող Ատուած՝ շնորհարեր Ատուած՝ շաւիղ Ատուած :

Ողորմած Ատուած՝ ողորմութիւնս Ատուած՝ ուղիղ Ատուած՝ ուղղորդ Ատուած՝ ուղղորդասէր Ատուած՝ ուղղորդապետ Ատուած՝ ուղղորդախօս Ատուած՝ ուղղորդարան Ատուած :

Չարատեսաց Ատուած՝ չարասաստ Ատուած՝ չարամերժ Ատուած՝ չարաբարձ Ատուած՝ չարահերձ Ատուած՝ չարաբաւ Ատուած :

Պահապան Ատուած՝ պահպանիչ Ատուած՝ պիտ Ատուած՝ պիտաւհան Ատուած՝ պատուելի Ատուած՝ պարունակող Ատուած :

Ջահ Ատուած՝ Ջահալոյս Ատուած՝ Ջահապայծառ Ատուած՝ Ջան Ատուած՝ Ջամբող Ատուած՝ Ջերմեաանդութիւն Ատուած :

Ռահ Ատուած՝ ռահ լոյս Ատուած՝ ռատարաշխ Ատուած՝ ռատախալ Ատուած՝ ռետին քաղցր Ատուած՝ ռահալարժ Ատուած :

Սուրբ Ատուած՝ սրբութիւն Ատուած՝ սաբաւօղ Ատուած՝ սէր Ատուած՝ սիրելի Ատուած՝ սահմանադիր Ատուած՝ ստեղծող Ատուած՝ սրբոց Ատուած՝ սոսկալի Ատուած :

Վեհ Ատուած՝ վեհագոյն Ատուած՝ վայելչութիւն Ատուած՝ վերակացու Ատուած՝ վարժիչ Ատուած :

Տէր Ատուած՝ տեսող Ատուած՝ տիւ Ատուած՝ տուիչ բարեաց Ատուած՝ տրտնեցելոց Ատուած :

Բարուն Ատուած՝ բարունապետ Ատուած՝ բախարար Ատուած՝ Յնծութիւն Ատուած՝ ցանկալի Ատուած՝ ցաւոց բժիշկ Ատուած՝ ցողահոս Ատուած :


Փառք Աստուած՝ փառաւորեալ
Աստուած՝ փառանդ Աստուած՝ փա-
ռաբանեալ Աստուած՝ փրկիչ Աստ-
ուած՝ փրկող Աստուած՝ փարթամ
Աստուած՝ փարատիչ ցաւոյ Աստ-
ուած՝ փառազօր Աստուած՝ փառք
'ի բարձունս Աստուած :

Քահանայապետ Աստուած՝ քերօ-
բէանիստ Աստուած՝ քաւիչ Աստ-
ուած՝ քաւութիւն Աստուած՝ քա-
ւարան Աստուած՝ քարոզիչ Աստ-
ուած՝ քննող Աստուած :

Օրէնք Աստուած՝ օրինադիր Աստ-
ուած՝ օրհնիչ Աստուած՝ օրհնեալ
Աստուած՝ օրհնաբանեալ Աստուած :

Քո սուրբ եւ անդ անուանցդ զօ-
րութեամբ՝ Տէր Աստուած ամենա-
կալ . եղիցի պահապան ծառայիս :





Ա Ղ Օ Թ Ք

Վասն կապանաց դիւաց և կախարդաց
 աղանդաւորաց և վասն դատաստանի
 յաջողելոյ :



Թ՝ Ա.ԳԱԽՈՐ հօր, ապաւէն ծա-
 րաւելոյ, փրկիչ նեղելոյ, որ վասն

մեր խոնարհեցար 'ի հայրական ծո-
ցոյ եւ առեր մարմին 'ի սրբոյ կու-
սէն Մարիամայ վասն մերոյ փրկու-
թեան . մատնեցար , ըմբռնեցար ,
չարչարեցար , խաչեցար եւ թաղե-
ցար եւ յարեար 'ի մեռելոց , եւ համ-
բարձար փառօք առ Հայր . զարթո
զգօրութիւն քո եւ եկ 'ի կեցուցա-
նել զզինս արեան քոյ տէր . եւ մի'
տար գրել սատանայի զքո փրկեալս
եւ մի' տար բնակութիւն չարին՝
զտաճար անուանդ քում սրբոյ .
եւ մի' զլքեալս քեզ մարմին եւ
անդամ թողուլ 'ի կոխումն եւ 'ի
կատականս չարին . այլ զթա 'ի
քո արարածս արարչական սիրով .
Տէր ոգորմեա մեզ , զի 'ի խաչ քո
պարծելով պարծեցաք եւ պահելով
պահեսցէ զմեզ յերեւելի եւ յա-


ներեւոյթ թչնամուոյն . եւ լիցի
պահապան ծառայիս Աստուծոյ ,
ամէն :

Չար իշխան քըն հալածին ,
Որք ընդ ծառայս քո մարտընչին .
Երեւելով նշան խաչին ,
Սներեւոյթք կործանեսցին :




ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ



Եւ մինչդեռ անցանէր ընդ այն
Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք
երկու. աղազակէին եւ ասէին. Ողոր-
մեաց մեզ որդի Գաւթի: Եւ իբրեւ
եկին ՚ի տուն, մատեան առնա կոյրքն
եւ ասէ ցնոսա Յիսուս. Հաւատա՞յք
եթէ կարող եմ առնել ձեզ զայդ .
ասեն ցնա՝ Այո՛, Տէր: Յայնժամ
մերձեցաւ յաչս նոցա՝ եւ ասէ. Ըստ
հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Եւ
բացան աչք նոցա. եւ ոստտեաց
նոցա Յիսուս՝ եւ ասէ. Զգոյշ կա-
ցէք, մի՛ ոք զիտասցէ: Եւ նորա
եղեալ համբաւեցին զնա ընդ ամե-
նայն երկիրն ընդ այն: Եւ յերանեկն
նոցա արտաքս, ահա մատուցին առ



նա այր մի համր դիւանար: Եւ յե-
լանելն դիւին խօսեցաւ համրն. եւ
զարմացան ժողովուրդքն եւ ասեն
թէ եւ ոչ երբէք երեւեցաւ այսպիսի
ինչ յիսրայելի: Իսկ փարիսեցիքն
ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ
դա զդեւս:




ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Եւ ել լուր նորա ընդ ամենայն
կողմն գալիլեացոց: Եւ վաղվա-
ղակի ելեալ ՚ի ժողովրդենէն, եկն
՚ի տուն Սիմոնի եւ Անդրեայ, Յա-
կոբու եւ Յովնանու հանդերձ: Եւ
զորանչ Սիմոնի զնէր ջերմացեալ,
վաղվաղակի ասեն ցնա վասն նորա:

Եւ մատուցեալ յարոյց զնա, կալեալ զձեռանէ նորա. եւ եթող զնա տենդն, եւ պաշտէր զնոսա: Եւ իբրեւ երեկոյ եղև 'ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս եւ զզիւահարս. եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունն: Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի պէս պէս աստից, եւ զեւ բազումս եճան, եւ ոչ տայր խօսել զիւացն, զի զիտէին զնա թէ Քրիստոսն է:




ՍՈՒՐԻ ԱԻԵՏԱՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ



Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի լեան կալ յաղօթս, եւ հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն Ասաուծոյ: Եւ իբրև այդ եղև՝ կոչեաց զաշակերտսն՝ իւր, եւ ընտրեաց 'ի նոցանէ երկօտասանս զորս եւ առաքեալս անուանեաց: ՉՍիմոն՝ զոր եւ Պետրոս անուանեաց, եւ զՍնդրէաս զեզրայր նորին, եւ զՅակորոս եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս եւ զԲարթոլղիմէոս: Եւ զՄատթէոս եւ զԹոմաս. եւ զՅակորոս Արիեայ. եւ զՍիմոն զկոչեցեալն նախանձայոյդ. եւ զՅուդա Յակորայ, եւ զՅուդա Իսկարիօվտացի՝ որ եղև իսկ մատնիչ: Եւ իջեալ նոքօք հան-

դերձ 'ի տեղի մի տափարակ, եւ
ժողով աշակերտացն նորա եւ բազ-
մութիւն յոյժ ժողովրդեանն, յամե-
նայն Հրէաստանէ եւ յԵրուսաղէմէ՝
եւ յայնմ կողմանէ, եւ 'ի ծովեզե-
րէն Տիւրոսի եւ Սիդոնի: Որք եկին
լսել 'ի նմանէ, եւ բժշկել 'ի հիւան-
դութենէ իւրեանց. եւ նեղեալքն
յայսոց պղծոց բժշկէին: Եւ ամե-
նայն ժողովուրդն խնդրէր մերձե-
նալ 'ի նա, զի զօրութիւն բազում
եղանէր 'ի նմանէ եւ բժշկէր զա-
մենեսին:



ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ



Յեա այսորիկ աօն էր Հրէից, եւ
 ել Յիսուս յերուսաղէմ: Եւ էր յե-
 յուսաղէմ 'ի Պրոպատիկէ աւազա-
 նին որ կոչէր երբայեցերէն Քեթ-
 հեզդայ, հինգ սրահ: Յորս անկեալ
 դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց՝
 կուրաց, կազաց, զօսացելոց, որք
 ակն ունէին ջրոցն յուզելոյ: Եւ
 հրեշտակ տեսան իջանէր ըստ ժա-
 մանակի յաւազանն, եւ յուզէր ըզ
 ջուրսն. եւ որ նախ 'ի շարժումն
 ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկէր,
 ոչ ունելով նշան հիւանդութեան:
 Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն
 եւ ութ ամ էր 'ի հիւանդութեան
 իւրու.մ:

Չնա իբրև ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր, եւ զիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա. Կամի՛ս ողջ լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէ՛ր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուղիցին, արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. Արի՛, առ զմահիծս քո՝ եւ գնա: Եւ ողջացաւ այրն, եւ յարեաւ, էառ զմահիծս իւր եւ շրջէր. եւ էր շարաթ յաւուրն այնմիկ:



Դ Ա Ր Չ

ԿԻՊՐԻԱՆՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԵՍ Կիպրիանոս ծառայ Աստուծոյ, յԱնտիոք քաղաքէ, աղգաւ հելլենացի, առն հեթանոսի որդի. անուն հօր իմոյ Եդեսիա, եւ մօր իմոյ Կղոզիա. յորժամ ծնայ ես յորովայնէ մօր իմոյ, ծնողք իմ նուիրեցին զիս յուսումն դից՝ լինել պաշտօնեայ կռոց եւ ետուն զիս յուսումն գիտութեան, եւ զամենայն ուսայ զկախարդական գիրս առաւել քան զՍիմոն եւ զՆաքովր, եւ եղէ հասու ամենայն հնարագիտութեանց. բազում անգամ ելա-

նէի յօդս եւ կախարդութեամբ զը-
նայի 'ի վերայ ծովու . եւ էին 'ի հրա-
մանս իմ ամենայն զուէրք զիւաց .
եւ զոր ինչ խորհէի՝ առ ժամայն կա-
տարէր : Եւանէի յապարանսն եւ առ-
նէի զչաւիղս արեգականն եւ զլուս-
նին յերեսս իմ, եւ երեսք իմ վայ-
լէին իբրեւ զարեգակն, եւ կատա-
րէի զկամս զիւաց մեծաւ ուրա-
խութեամբ, եւ էի մոլորեալ 'ի
զործս չարութեան եւ ոչ ճանաչէի
զԱստուած, եւ զամենայնսն զայ-
թակղեցուցանէի յաղագս չար ար-
ուեստին իմոյ . զոմանս աչացաւ
առնէի, զոմանս զլխացաւ, զոմանս
քամոս, զոմանս ջերմոս, զոմանս
հիւանդ, զոմանս յաղգաց վարէի,
զոմանց զգոյն յերեսացն չրջէի . զո-
մանց զմիտս մոլորեցուցանէի . զո-

մանս առելիս առնէի իւրեանց ազ-
գին . զայր եւ զկին արկանէի ընդ
միմեանս, եւ տայի նոցա առել ըզ
միմեանս, եւ զայլ բազում չարիս
զիւականս առնէի 'ի վերայ երկրի .
եւ այնչափ հմուտ եղէ զիւացն՝ զի
ոչ մնաց զործ եւ ոչ խորհուրդ զոր
ոչ զիտացի . զիտացի եւ զբազմու-
թիւն զիւաց, զի որպէս ջուր որ
եւանէ յաղբերաց՝ այնպէս եւանեն
զեւք եւ պատրեն եւ խարեն զոր-
գիս մարդկան . զոր Տէր Աստուած
հեռացուցէ 'ի ծառայէս Աստուծոյ :


Եւ կապէի կախարդութեամբ ի-
մով զերկինս՝ որ ոչ տայր զանճրեւ .
զերկիր՝ որ ոչ բուսուցանէր զսեր-
մանիս իւր . զարեգակն եւ զլուսին
եւ զաստեղս հաստատութեան . ըզ
ճառս՝ որ ոչ տային պտուղս . զծով՝

որ ոչ տայր զալիս իւր . զձկունս՝
որ ոչ լողային 'ի ծովս . զգետս՝ որ
ոչ գնային . զաղբիւրս՝ որ ոչ բրդ-
խէին . զթռչունս՝ որ ոչ վերանա-
յին յօդս . զանասունս՝ որ ոչ յղա-
նային . զյղիս՝ որ ոչ ծնանէին . ըզ
կանայս՝ որ ոչ յղանային . զեռունս՝
որ ոչ զեռային . զվաստակաւորս՝
որ ոչ վաստակէին . զվաճառականս՝
սր ոչ վաճառէին . զօգն՝ որ ոչ թըն-
դայր , եւ կապէի զերկինս օդօքն
եւ զերկիր ամենայն զեռնօք . որ ոչ
անցանէին ընդ հրամանս իմ . հա-
զար հարիւր եօթանասուն եւ երկու
ազանդք կանանց եւ կախարդաց ,
եւ արանց ազանդաւորաց : Արձակ
Երիտասարդ մի որոյ էր անուն Ազ-
ղաւիգոս , ցանկացաւ գեղեցիկ կուսի
միում որոյ անունն էր Յուստիանէ՝

առնուլ զնա 'ի կնութիւնս եւ ոչ կա-
րէր , եւ առաքեաց բազում պատ-
ուական ինչս , ոսկի եւ արծաթ եւ
գեղեցիկ հանդերձս . եւ կոյսն ոչ
հաւանեցաւ եւ դարձոյց անարգա-
նօք . եւ առեալ երիտասարդն զա-
մենայն ինչս գնաց առ Նիպրիանոս ,
եւ նա ասէ . Ես դարձուցանեմ ըզ
նա 'ի կամս քո , եւ առաքեաց զմի
'ի դիւացն առ Յուստիանէ եւ նա
սուրբ աղօթիւքն հալածեաց զնա ,
եւ սպա առաքեաց զդեւն պոռնը-
կութեան , եւ եղեալ զիւրին 'ի կեր-
պարանս կնոջ պառաւոյ , եւ գնա-
ցեալ 'ի դուռն սուրբ կուսին 'ի դի-
շերի եւ ասէ . Ո՞վ դուստր իմ՝ զայս
դիշեր ընդ քեզ կացից յաղօթս . եւ
մտեալ դեւն առ կոյսն եւ կային
յաղօթս զողջոյն գիշերն միաբանս .

և ապա ասէ սատանայ . Ո՞վ դուստր
 'ի կուսութենէ ո՞վ իցէ վարձս ըն-
 կալեալ . Եւս թէ չէր ամուսնաց-
 եալ , ուստի էին նախահարք , մար-
 դարէք , առաքեալք , հայրապետք .
 ևկ երթիցուք առ մեծն Կիսրիանոս
 և ամուսնացիր , և ապա իմացեալ
 կուսին եթէ զիւական էր բանն ,
 եհան զնշան Խաչին , 'ի վերայ մարմ-
 նոյ իւրոյ և կնքեաց զանձն , և
 դեւն հարածեցաւ և աներևոյթ
 եղև ահիւ և զողութեամբ , և
 զնաց առ Կիսրիանոս : Եւ Կիսրի-
 անոս ասէ զդեւն . Զի՞նչ իցէ զի
 երկիւղիւ զողաս և սասանիս . ասէ
 դեւն . Տեսի զնշան Խաչին և եր-
 կիւղիւ զողամ և սատանիմ : Ասէ
 Կիսրիանոս . Զի՞նչ իցէ նշան Խա-
 չին որ զարձուրեցուցանէ զքեզ :
 Ասէ դեւն զԿիսրիանոս : Երգուիր

զի ոչ ուրանաս զմեզ , և ևս ասեմ
 քեզ զամենայն խորհուրդս մեր և
 զնշան Խաչին : Եւ երգուաւ Կիսր-
 իանոս 'ի սուա և 'ի սնտաի պաշ-
 տամունս նոցա եթէ Ոչ ուրանամ
 զձեզ : Եւ սկսաւ դեւն պատմել մի
 ըստ միջէ զամենայն և ասէ :



Աստուած զմարդ արար 'ի հոգոյ ,
 զԱրամ . և ասէ , Եկայք հրեշտակք
 և հրեշտակապետք , երկիրպագէք

ձեռագործին իմուժ Ադամայ . այլ
 դասք դիւաց հպարտացան եւ ոչ
 խոնարհեցան երկիրպագանել Ադա-
 մայ . բարկացաւ Աստուածութիւնն
 եւ զերկինս պատառեաց եւ զդիւաց
 գունդս 'ի վայր ելից , զանթիւ զօրս
 մեր . եւ շինեցաք ապարանս եւ զը-
 ժոխք անուանեցաք , եւ զհոգիս ար-



դարոց եւ մեղաւորաց մինչեւ ցՅ ով-
 հաննէս Մկրտիչ , զամենայն ըմբըռ-

նեցաք եւ 'ի դժոխս ամաք : Յետոյ
 առաքեաց Աստուած զՈրդին իւր



Միածին որ եկն եւ ծնաւ 'ի սուրբ
 կուսէն Մարիամայ Աստուածածինն ,
 զմեռեալս յարոյց , զըսրոսս սրբեաց ,
 զհաղս գնացոյց , զկուրս լուսաւոր-
 եաց . եւ զայլ բազում սքանչելիս
 արար . մատնեցաւ 'ի Յուդայէ եւ
 խաչեցաւ 'ի Շրէից եւ թաղեցաւ ,
 եւ յարեաւ 'ի մեռելոց , եւ խաչաւն



Իւրով զգժօխս աւերեաց եւ համ-
բարձաւ առ Հայր յերկինս, եւ գա-
լոց է միւսանդամ գատել զկենդա-
նիս եւ զմեռեալս . եւ Խաչիւն իւ-
րով լուսաւորէ զամենայն արարածս :
Հաւատացեալքն ուրախ լինին եւ
ուրացողք կոծեսորին :

Այս է նշան Խաչին զոր տեսա-
նեմք եւ զարհուրիմք եւ սոսկամք .
եւ ապա Արարիւնոս 'ի միտս իւր

եկեալ ասէ, Եթէ նշան Խաչին այդ-
չափ զօրութիւն ունիցի, ապա Խաչ-
եալն որչափ եւս առաւել :



Ես հաւատամ 'ի Քրիստոս, եւ 'ի
զօրութիւն Խաչին, եւ յԱստուած
Հայր ամենակալ զի նա միայն է
ճշմարիտ Աստուած, եւ կուռքն
գեւք են եւ սատանայ : Եւ ապա այ-
րեաց զամենայն գիրս կախարդու-
թեան իւրոյ, եւ զնաց առ Եպիս-
տոս :

կոպոս քաղաքին, եւ մկրտեցաւ եւ
 ձեռնադրեցաւ քահանայ, եւ զկնի
 աւուրց' Յայտկոպոս. եւ աղօթս
 արար եւ ասէ. Տէր Աստուած իմ,
 սիրեցի զքեզ եւ ծանեայ 'ի ձեռն
 սուրբ հայրապետին Մատթէոսի եւ
 Յուստիանեայ կուսին զգօրութիւն
 Խաչի քո. ողորմած Աստուած, ու
 զորմեաց ինձ որպէս աւազակին.
 քաւեա զիս որպէս զՋաքէոսն. ար-
 դարացո զիս որպէս զմաքսաւորն.
 հան զիս 'ի գբոյ մեղաց որպէս զԵ-
 րնձիա եւ զՆանիէլ 'ի գբոյ բան-
 տին. չիջո յինն զբռնութիւն թըշ-
 նամւոյն՝ որպէս զհուր կրից ման-
 կանց 'ի Բարեյօթիէ հողմաբեր ցո-
 ղօյն օրհնութեան:

Եւ զոր յառաջն կապէի չար եւ
 զիւսկան ազանդօք, այժմ արձակ-

եալ եմ դամենայն կապեալսն հրա-
 մանաւն Աստուծոյ. կայցեն եր-
 կինք եւ երկիր 'ի հաստատութեան
 իւրեանց. հող զբոյս դալար բու-
 սուսցէ. ծառք զպտուղս իւրեանց
 տացնն, եւ ամենայն կապեալքն
 արձակումն ապցեն յանուն ամենա-
 սուրբ Երրորդութեանն Աստուծոյ:



Երդմնեցուցանեմ զքեզ, սատա-
 նայ, անուամբն Աստուծոյ Յիսուսի

Քրիստոսի Տեառն մերոյ . եւ 'ի հա-
 դար եւ մի անունն Աստուծոյ՝ որ
 զԱզամն եւ զԵւա բաղկացոյց . եւ
 զինն դասս հրեշտակաց՝ որ ելանեն
 եւ իջանեն յԱպրիպօլիս քաղաք , եւ
 յանուն սերովբէից՝ որ կան 'ի սպա-
 սաւորութիւն Որդւոյն Աստուծոյ ,
 եւ սքօղելով ծածկեն զերեսս իւր-
 եանց եւ երգեն , Սուրբ , Սուրբ ,
 Սուրբ , Տէր զօրութեանց , լի են
 երկինք եւ երկիր փառօք քո :

Երդմնեցուցանեմ զձեզ , զեւք
 չարք եւ որդիք սատանայի , որ էք
 օգնական ամենայն կախարդաց եւ
 չարագործաց . երդմնեցուցանեմ ըզ-
 ձեզ զեւք 'ի գեղեցկութիւն Ազա-
 մայ . 'ի վայելչութիւն դրախտին .
 'ի խոնարհութիւն ամենայն սրբոց .
 եւ 'ի սէր ամենայն մարտիրոսաց .

'ի պատարազն Արելի 'ի կոչել զա-
 նուն տեառն Ենովսայ . յարդարու-
 թիւն Նոյի , 'ի քահանայութիւն Մել-
 քիսեղեկի , 'ի հաւատս եւ 'ի հիւ-
 րընկալութիւն Աբրահամու , 'ի կա-
 պանս Սահակայ , 'ի պատրան Յա-
 կովբայ , 'ի գեղեցկութիւն Յովսե-
 փայ , 'ի համբարձումն Եղիայի , 'ի
 հնազանդութիւն Եղիսէի , 'ի տախ-
 տակն Մովսիսի , 'ի պատմուճանն
 Ահարոյնի , որ զարդարեալն էր եր-
 կոտասան ակափք , որ օրինակ էին
 երկոտասան Առաքելոյն Քրիստոսի .
 'ի քնարն եւ 'ի Սաղմոսն Գաւթի , 'ի
 մատանին Սողոմոնի , 'ի դաւաղանն
 Մովսիսի , եւ յաղօթան Ահարոյնի ,
 յաւեստան Գաբրիէլի զոր ետ սուրբ
 կուսին Մարիամու . 'ի ծնունդն եւ
 'ի մկրտութիւնն Յիսուսի Քրիստոսի



որ մկրտեցաւ 'ի Յորդանան 'ի Յով-
 հաննէ, եւ 'ի սուրբ հրամանն որ
 հրամայեցին անդամալուծին թէ՛ Արի,
 առ դմահիճս քո . եւ 'ի թուքն որ
 երաց զաչս կուրին, եւ 'ի գալուստն
 յաւանակաւ յերուսաղէմ, 'ի յարու-
 թիւնն Ղազարու, 'ի մատումն եւ 'ի
 Խաչելութիւն Քրիստոսի, 'ի գեղարդն

եւ 'ի բեւեռն Քրիստոսի, 'ի վշեղէն
 պատկն եւ 'ի հեղումն արեան Որդւոյն
 Աստուծոյ որ հեղաւ եւ 'ի վերայ սուրբ
 Խաչին :




Նրգմնեցուցանեմ՝ եւ կապեմ եւ
 հալածեմ զձեզ դեւք չարք, Յա-
 րութեամբն եւ Համարձմամբն Քր-
 թիստոսի, եւ 'ի գալուստ Հոգւոյն
 սրբոյ, եւ այլակերպութեամբն Քրիս-
 տոսի որ այլակերպեցաւ 'ի թափօր

լերինն , ոչ ունիւք իշխանութիւն
 դեւք եւ ազանդք եւ կախարդու-
 թիւնք արանց եւ կանանց մերձե-
 նալ 'ի ծառայս Աստուծոյ :

Երդմնեցուցանեմ զձեզ 'ի բանն
 անսպառ , 'ի լոյսն անճառ , 'ի թագն
 անպատում որ հրեշտակացն զար-
 հուրելի , 'ի թագաւորն սոսկալի ,
 'ի մատանին Սողոմոնի , 'ի կապանսն
 պղնձիս , 'ի տախտակն Մովսիսի ,
 դրեալ մատաւրն Աստուծոյ . յա-
 զօթան Ահարոյի , 'ի պատմուճանն
 ցանկալի . 'ի սուրբն Սինայ , 'ի քա-
 ռամհօրեայ պահս Մովսիսի , 'ի սուրբ
 արիւն մանկանցն Բեթլեհեմի , յար-
 դարութիւն Նոյի , 'ի հաւատս Առի-
 տայ , 'ի կարգն Մելքիսեդեկի , յա-
 ւետիսն Գարրիէլի , յաթոռն չորեք-
 կուսի , որոյ մի կողմն մարդոյ էր

նման , իմաստնոյ եւ բանաւորի . մին
 'ի կերպարանս էր առիւծու . որոյ
 տեսիլն հուր կիզելի , մին ահեղ եւ
 սքանչելի , եւ զտեսիլ հրեղէն եղին
 ունէր , միւսն ունէր զթեւ արծուոյ ,
 ահաւոր տեսլեամբ քան զամենայն եւ
 զարմանալի էր որ 'ի վերայ նստեալ
 բազմէր տէրն եւ Աստուած ամենայնի .
 ուր այս անուանք սուրբք յիշես-
 ցին , դիրք եւ հրամանք պատահին ,
 չարն 'ի բաց միշտ հալածի , կապանք
 եւ յուռութք լուծանին 'ի ծառայից
 Աստուծոյ . ամէն :

Տոյց մեզ Տէր զողորմութիւնս քո ,
 եւ զվերկութիւնս քո աուր մեզ :
 Որպէս զի մեծ են գործքք Տէր ,
 եւ յոյժ խոր են խորհուրդքք քո :





Ա Ղ Օ Թ Ք

Երանելոյն Յովհաննու Գառնեցւոյ
ապացեալ առ սուրբ Սատուած ածինն :



ՍՍՏՈՒԱՄՍՄԻՆ մայր Գրիստո-
սի եւ ծնող միածնի հօր . բարևող
անիծից եւ պարձանք ազգի մարդ-
կան : Յերկնային զօրացն երանեալ

եւ հողեղինացս օրհնաբանեալ . միջ-
 նորդ Աստուծոյ եւ մարդկան . հաշ-
 տարար ընդ արարածս . թաղ եւ պը-
 սակ կուսից եւ համարձակ բարեխօս
 վասն մեզաւորաց : Մեզուցեալս ա-
 մենայնի . անկանիմ առաջի քո , եւ
 աղաչեմ զքեզ իբրեւ զնոյն ինքն
 զմարմնացեալն 'ի քէն . բարեխօսեա
 վասն իմ առ բանն Աստուած զոր ծը-
 նար մարմնով . զոր կերակրեցեր ըզ-
 կերակրիչն ամենայն կենդանեաց :

Աղաչեա վասն մեր զանդրանիկդ
 քո : Կաց կանգուն առաջի նորա
 ցուցմամբ սուրբ ստեանդդ : Կացո
 առաջի նորա միջնորդ եւ բարեխօս
 զմանկութիւն իւր . զկաթամբ սնա-
 նեին օրպէս մանուկ . զուսովդ բառ-
 նիլն . զզրկօք գգուիլն . զչրթամբք
 համբուրիլն . զողջագուրիլն . օրպէս

տղայ . զերթ եւ զեկն քո ընդ նմա



յնգիստոս , եւ 'ի Նազարէթ եւ յամե-
 նայն տեղիս . զտրամութեամբ տաղ-
 նապիլն քո վասն նորա 'ի ժամ չար-
 չարանացն . զյանձնարարութիւն քո
 առ Յովհաննէս , յորժամ հեղուսեալ
 կայր վշտօք 'ի վերայ խաչին զգառն
 արտասուան քո զոր վտակօրէն հե-
 ղուիր յորժամ տեսանէիր զնա վը-
 տանդեալ 'ի վերայ խաչին . վասն

որոյ մասնատատան տառապէիբ
 կսկծակոծ, վասն չարչարանացն .
 վասն սաստիկ ծարաւմանն . վասն
 ճաշակման լեզւոյն՝ քացախին . վա-
 սըն տեսանելւոյն դքրտնատեսակ
 արեան իջումն . վասն իջուցանել-
 ւոյն 'ի խաչէն արիւնազան մարմնո-
 վըն . վասն դիազարգեալ դնելով 'ի
 սուրբ գերեզմանն :



Ազաչեմ գրեց մայր լուսոյ . հայ-
 ցեալ զթողութիւն մեզաւորիս : Գիր

աղերս առաջի նորա դամենակիրս
 չարչարանաց իւրոց . զոր վասն իմ
 կրեաց բարերարն եւ մարդասէրն :
 Յիշեցս սուրբ կոյս զայս քան չար-
 չարանացն, զի թերեւս ողորմեացի
 եւ ներեացէ բաղմամեղիս . եւ ջըն-
 ջեացէ դձեռագիր իմոց յանցանաց :
 Եւ իւր անմեղ մատամբն եւ սուրբ
 արեամբն դրոշմեացէ զգերեալս 'ի
 դպրութիւն կենացն անվսխճանից
 ընդ ամենայն սուրբս իւր :

Եւ քեզ երկրպալութիւն 'ի մեղու-
 ցեալ ոգւոյս, ամենասուրբ կոյս,
 բարեխօս չոր ծառայիս Աստուծոյ
 ամէն :





Ա Ղ Օ Թ Ք

Արանելոյն Յովհաննու Գառնեցւոյ վանն
ճանապարհի :



ԱՌԱԶՆՈՐԻ կենաց ճանապարհ
ճշմարտութեան տէր մեր Յիսուս
Քրիստոս : Որ առաջնորդեցեր Յովսե-
փայ յեզիպտոս , եւ Իսրայելացւոց

ընդ ծոցն կարմիր . եւ Մովսիսի 'ի
լեառն Սինէական , եւ ժողովրդեանն
յերկիրն պարզեացն եւ Կղէոպա-
սացն ճանապարհակից եղեր յՅմմա-
ւուս :

Աղաչեմ դքեզ տէր առաջնորդեա
լինձ եւ եղբարց իմոց դնալ խաղա-
ղութեամբ զառաջիկայ ընթացս .
փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ
թշնամուոյն , եւ բարի առաջնորդեա
'ի դէմ եղեալ 'ի տեղին . զի դու
ես ճանապարհ եւ ճշմարտութիւն
եւ կեանք մեր եւ քեզ փառք եւ
երկրպագութիւն այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից . ամէն :





ԱՂԵՐՍ

ՎԱՍՆ ԶԱԻԱԿ ԾՆԱՆԵԼՈՅ



ԱՍՏՈՒԱԾ բոլորից, անճառ մե-
ծութիւն, հզօր զօրութիւն, ամե-
նակարող բարեյարութիւն: Առ քեզ
հայի ամենայն ակն տեսողի: Նայ-
եաց ՚ի պաղատանս հառաչման ձայ-
նի քոյոց ծառայից եւ աղախնեաց:

որպէս Աննայի լուար հեծութեան,
եւ ետուր նմա զմեծն Սամուէլ. եւ
Յովակիմայ եւ Աննայի զամենօրն-
նեալն Մարիամ, եւ Զաքարիայի եւ
Եղիսաբեթի պարգեւեցեր զաւակ
գտուրբ զկարապեան եւ զՄկրտիչ



Յովհաննէս: Նոյն ողորմութեամբդ
քո պարգեւեա եւ տուր սոցա զա-


ւակ բարի ծառայիս Աստուծոյ ամէն:
 Զայն բարբառոյ յանապատի,
 սուրբ Յովհաննէս դու ամօրդի .
 անմեղ դառինն անարատի,
 վկայ եղեր դու կրկնակի:

Բարեխօսութեամբ սրբոց մար-
 գարէիցն Մովսիսի եւ Ահարովնի,
 Նաթանայ եւ Սամուելի, Դաւիթ,
 Ամովս, Միքիա, Աբդիաս, Յոշիան,
 Նաւուամ ընդ Ամբակումի, Սոփոնիա
 եւ Անգելի, Մաղաքիա ընդ Դանիւ-
 ելի, Զաքարիաս ընդ Եղեկիելի,
 եւ աւենայն սրբոց դասի, պահա-
 սպան լիցին ծառայիս Աստուծոյ .
 ամէն:



ԱՂԵՐՍ

ԱՌ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ
 ՆԱԽԱՎԿԱՅՆ



Ի քէն հայցեմք արտասուագին .
 նախավկայ Տեառն արարչին .
 սուրբ Ստեփաննոս բացող երկնին .
 տեսող զՅիսուս յաջմէ ծնողին .
 լեր բարեխօս արեամբ քոյին .
 տալ մեզ հանդիստ 'ի յանկողնին .
 արթուն լինել յառաւօտին .
 բարեբանել զլոյսն անքնին:




ԱՂՕԹՔ

ԶՕՐԱԻՈՐ ԱՌ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՍ




ԱՆԵՂ անմահ արարչին սպասաւորք անմարմինք՝ վերին զօրացն դասապետութիւնք : Աթոռք, Քերովքէք եւ Աերովքէք, Տէրութիւնք, Զօրութիւնք եւ Իշխանութիւնք՝, Պետութիւնք, Հրեշտակապետք եւ

Հրեշտակք, Միքայել եւ Գաբրիէլ Պետք վերնական զօրացն դասուց որք անլուելի ձայնիւ փառարանութիւն մատուցանէք ամենասուրբ Երրորդութեանն . եւ երեքսրեան ձայնիւ եղանակէք զերգս ասելով, ողորմեա դու սահղծեր մի՛ կորուսաներ . զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ . օգնական եւ պահապան լերուք ձաւայիս Աստուծոյ . ամէն :




ԱՌ՝ ՍՈՒՐԲ ԶԻՆԱԿՈՐՄ ՔՐԻՍՏՈՍԻ




ԲԱՐԵԹՕՍՈՒԹԵԱՄԲ սուրբ զօրա-
վարացն , սրբոյն Սարգսի զօրավա-
րին եւ որդւոյ նորա Մարտիրոսին ,
եւ սրբոյն Թէոդորոսի զօրավարին .
Գէորգայ զօրավարին եւ Մերկեռի-
ոսի զինաւորին . Անդրէի զօրավա-
րին , եւ չորից զինուորացն՝ Բասո-
սի Եւսեբի Եւտիքի եւ Բասիլիդեայ .
սրբոյն Մինասայ , Երմոզինեայ եւ
Գրաբոսի , եւ սրբոց Ատովեանց .
Ոսկեանց եւ Սուքիասանց , Խարիթ-
եանց , եւ այլ ամենայն սրբոց բա-
րեխօսութեամբն պահեա զձառայս
քո . ամէն :

ՎԱՍՆ ԱԿԱՆ ԶԱՐԻ ԵՒ ԼԵԶՈՒԻ

ԶԱՐԻ



ՏԵՐ Աստուած մարգասէր , մար-
զասիրի հօր որդի , գու ես պահա-
պան եւ օգնական յուսացելոցս 'ի
քեզ ողորմութեամբ քո 'ի ծառայս ,
եւ պահեա անխորձ 'ի չարէ եւ ան-
սայթաք յորոգայթէ երեւելի եւ ա-
ներեւոյթ թշնամւոյն . պահեա 'ի
չար աչաց եւ 'ի չար լեզուէ . 'ի
սրոյ եւ յամենայն հարուածոց երե-
ւելեաց եւ աներեւութից պահեա
զձառայս քո . ամէն :





ԱՂԱԶԵՄ զքեզ ֆրիստոս փրկիչ աշխարհի հայեա յիս եւ ողորմեա եւ շնորհեա ներումն բազում անօրէնութեան իմոյ . քանզի անարգեցի զամենայն բարիսն զոր արարեր յիս 'ի մանկութենէ իմմէ . զի ըզտխմարս եւ անխմաստս արարեր անօթ գիտութեան :

Յաճախեաց յիս զշնորհս քո , եւ լըցոյց զքաղց իմ եւ զծարաւ իմ զովացոյց , եւ լուսաւորեաց զխաւարեալ միտս իմ , եւ ժողովեաց 'ի մուրումնէ զխորհուրդս իմ եւ ելից 'ի ծոց իմ . վասնորոյ անկեալ երկիրպագանեմ առաջի քո՝ խոստո-


վան եղեալ զբարերարութենէ քումմէ , եւ աղաչեմ դադարեցո առիս զխոստումն շնորհի քո , եւ պահեա զնա 'ի գանձի քում . զի դարձեալ տացես ինձ զնա յաւուրն յայնմիկ : Մի՛ բարկանար ինձ մարդասէր զի ոչ հանդուրժեմ սպառնալեաց քոց . յաղագս որոյ եւ աղաչեմ ժախով , զի առաւել քան զչափն յաճախեաց յիս շնորհս քո . վասն զի եւ լեզում իմ տկարացաւ ոչ կարելով խօսել զնմանէ . հիացան եւ միտք իմ ոչ բերելով զբազմութիւն արեաց նորա : Կերպարանք եւ ճառագայթ օրհնելոյ հօրդ , դադարեցո առիս 'ի հոսանաց նորա . զի իբրեւ զճուրբորբոքեալ բոցակիզեցէ զերկամուռս իմ եւ զսիրտ իմ . եւ անդր դարձեալ սպարզեալ ինձ զնա եւ

կեցո զիս յարքայութեան քում. մի՛ յիշեր զանօրէնութիւնս իմ. յանդրգնիմ եւ հայցեմ. աուր ինձ ըզ խնդրուածս իմ, եւ արա առիս օթեւան օրհնեալ հարբ քով յաւուր յայտնութեան քո. Հնորհեա ինձ, Քրիստոս, զհայցուածս իմ, զի դու միայն ես աուրիչ կենաց իմոց, եւ քեզ ընդ հօր հօգւոյն սրբով փառք այժմ եւ յախտեանս. ամէն :



ՄԱՂԹԱՆԻՔ

ԱՌ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՄԵՐ



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ հայր պարծանաց, ընկալ գրանս դայս մաղթանաց. եւ աղաչեա զհայրն փառաց, ջնջել զգիր մեր յանցանաց : Այլ եւ բարեխօսութեամբ երեք հարիւր ութ եւ տասն Հայրապետացն եւ ուղղափառ եպիսկոպոսաց ազօթիւք պահեա տէր Աստուած զձառայս քո. ամէն :




ԱՌ ԴԻԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲ. Յ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՔԵՐԱՆԻ



ՏԱԶԱՐ Աստուծոյ եւ բնակարան
սուրբ հոգւոյն , 'ի քէն սուրբ ա-
ւազանաւն կոչեաց յորդեգրութիւն
հօրն երկնաւորի : Այսօր 'ի քեզ
կազմեցաւ պատարացել դառն ա-
նարատ : Եւ ես դիմեալ եկի առ
դուքս քո . եւ աղաչեմ դքեզ ,
մաքրեա զիս վերստին լուացմամբ ,
եւ սրբեա 'ի մեզաց եւ արա ար-
ժանի մտանել առաջի սրբոյ սեղա-
նոյդ յերկրպագութիւն :



Սբբոյն Գլխորի Նարեկացւոյն ընդգիւն-
մարտ դեւաց այս նուագ աղօթից եւ դիւա-
նարսուռ ջերմատաղնաղ ակտուարսւռ .
Թեանց Աստուծով փարստիչ :



ՍՐԳ՝ այսքանեաց անբաւից հրա-
չից հանդերձիչ Հայրամենաստեղծ :
Անունդ ահաւոր , ճայն սարսափե-
լի , կոչումն ընտանի , բան համ-
բուրելի , ազդումն սքանչելի , հրա-
ման սոսկալի , էութիւն անքննելի ,
դոյութիւն անճառելի , իսկութիւն
անբաւելի , դօրութիւն անգննելի ,
կամք ամենաբարի , տէրութիւն ան-
սահմանելի , մեծութիւն անչափե-
լի , բարձրութիւն անբովանդակելի ,
որքանութիւն անկշռելի , առաւե-
լութիւն անհասանելի , պատճառ

որդւոյ հայրութեամբ այլ ոչ նախա-
դրութեամբ :


Քեւ եւ 'ի ձեռն քոյդ անպարազիր
դօրութեանդ սաստեա տաղհապող
եւ զիւական տենդիս ջերմութեան,
որ սպրդեալ մուծաւ ընդ մեզաց,
զի փախիցէ 'ի մարդոյս, զարհուր-
եալ 'ի սխրալի եւ յանբաւելի ար-
եանդ վատկի զառինդ երկնաւորի
որով սրակեալ միանդամ 'ի մշտնջե-
նաւորս համայն մաքրեցաք : Եւ արդ՝
յայս պատկառելի խոնարհութենէ
արարչակերտս խորհրդոյ՝ ամաչեսցէ
սատանայ 'ի գործս չարեաց իւրոցն
հրեշտակաց : Տանջեսցի եւ հալա-
ծեսցի, հեռացեալ եւ արտաքս ա-
ռաքեալ 'ի շինուածոյ խորանէ քումդ
քնակութենէ յարտաքին խաւարն :
Եւ ջրջեալ մաքրեա զարտասուս ող-

բոց 'ի զիմաց մերոց . եւ զհառա-
չունն ձայնի հեծութեան 'ի սրտից
մերոց : Եւ յիշատակաւ հարման հե-
ղուսից, քսամնափուշ, տաժանա-
տեսիլ ողեպահանջից, որով սկսե-
ցաւ միածինդ քո յաշտարակ Խա-
չին, ցաւեսցի չարին : Եւ 'ի կողա-
հերձ սայրասուր սլաքէ ուժգին
բաղխմանէ՝ որով զվէրն մեծ ընկալաւ,
իսպառ սատակեսցի սկզբնարարն,
մահու : Եւ զի խոնարհեցոյց զգով-
եալն գլուխ յաւանդելն զհողին 'ի
ծոց քո բարձրեալ, ապստամբութիւն
անբարի բարուցն բելիարայ 'ի կոր
կործանեսցի յամենայնիւ հերքեալ 'ի
կորուստ : Եւ զի զողեալ ծածկեցաւ
անմահն իսկութիւն յորովայնի երկ-
րի, այսու ամբարձեալն հոբարտու-
թիւն կարծեալ դոռողին 'ի յատակա

մահու գժոխոց մթին ստուերին յառեալ դիտեսցէ : Եւ յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական , որով մահացու դիմամարտութիւն թունից վիշապին՝ կենարարն կրիւք ամենազօրին : Ասան զի 'ի վառս քո հայր ողորմութեան իբր 'ի գովեստ որդւոյ քո հոգւովդ սրբով զայս խոստովանիմք : Քանզի ոչ պիտակինչ սուկ զօրութիւն ունի զմիւսմէն՝ առ մի խորհրդականն խորութիւն : Այլ զանրակիզմն բանդ անձնաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք : Եւ քեզ միայնոյ սուրբ Երրորդութեանդ , հաւասարապատիւ տէրութեանդ համարուն անբաժին ինքնութեանդ , օրհնարանութիւն՝ գոհութիւն՝ զօրութիւն՝ եւ անձառ վայելչութիւն մեծութեան՝ բարեվիճակ հարթութեան՝ զուգակչիւ հաւասարութեան ցաւիտեանս . ամէն :

ՄԱՂԹԱՆԻՔ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ
ԶՕՐԱԽՈՐ ԸՆԳԴԷՄ ԱՄԵՆԱՅՆ ԶԱՐԵԱՅ
ԲԱՆ ԺԲ .



ԸՆԿԱԼ քաղցրութեամբ , տէր Աստուած հզօր , զդառնացողիս դաշանս : Մատիբ զթութեամբ առ պատկառեալս դիմօք : Փարատեա , ամենապարզեւ , զամօթական տրիութիւնս : Բարձ յինէն , ողորմած , զանբերելի ծանրութիւնս : Անջրպետեա , հնարաւոր , զմահացու կըրթութիւնս : Աւարեա , միշտ յաղթող , զխաբողին հաճութիւնս : Բացադրեա , վերնային , զմոլեւոյն մառախուղ : Կնքեա , կեցուցիչ , զկորուսչին ընթացմունս : Յրուեա ,

ծածկատես , զըմբռնողին չար դըտ-
մունս : Խորտակեա , անքննին , ըզ-
մարտողին զիմեցմունս : Տեառնա-
գրեա քո անուամբդ զլուսանցոյց
երդ յարկիս : Պարփակեա քո ձե-
ռամբդ զառաստաղ տաճարիս : Գը-
ծադրեա քո արեամբդ զմուտ սեմոց
սենեկիս : Կերպացո զքո նշանդ 'ի
հետս ելից մաղթողիս : Ամբացո քո
աջուդ զհանգստեանս խշտիս : Մաք-
րեացես 'ի յաղբից զծածկարան ան-
կողնոյս : Պահեսցես քո կամօքդ ըզ
տառապեալ անձն ողւոյս : Անխար-
դախ արասցես զքո շնորհեալ շունչ
մարմնոյս : Կացուցես շրջափակ ըզ
պար զօրուդ երկնայնոյ :

Կարգեսցես 'ի զիմի ընդդէմ դիւացն
դասու : Տուր հանգիստ բերկրու-
թեան , մահահանգոյնս նիրհման 'ի

խորութեան զիշերիս : Բարեխօսու-
թեամբ հայցուածոց սրբոց Աստուա-
ծածնիդ եւ ամենայն ընաբելոց : Ամ-
փոփեալ պարուրեա զպատուհան
տեսութեանց , զգայարանացս իմաս-
տից , անզարհուրելի զետեղմամբ ,
'ի ծփական խոռվութեանց , կենցա-
ղական զբաղմանց , անբջական ե-
բազոց , խոլականաց ցնորից : Յիշա-
տակաւ քո յուսոյդ անյխասելի
պաշտպանեալ , եւ օթափեալ վերբա-
տին 'ի ննջմանէ ծանրութեանց , ա-
մենազգաստ արթնութեամբ , հոգե-
նորոզ զուարթութեամբ 'ի քեզ ար-
ձանացեալ զայս ձայն մաղթանաց
բուրմամբ հաւատոց , քեզ ամենօր-
նեալ թագաւոր փառաց անձառից ,
փառարանողաց երկնագումար խըմ-
բից երդակցեալ յերկինս առաքել :
Ձի դու փառաւորեալ ես յամենայն
արարածոց . յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն :

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅՆ
ԲԱՆ ԽԱ.



Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնեալդ յամենայնի, հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ առ 'ի քէն եւ ոչ ինչ, որ 'ի ծագել աւերատուեր նշուլից սղորմութեան քո փառաց՝ հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խղին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վերք, բառնին ապականութիւնք, տեղի տան արքութիւնք, նահաւջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէզն, մերժի մառախուղն, փարա-


տի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տասսորի տագնասպն, չքանաս չարիքն, հալածին յուսահատութիւնքն, եւթագաւորեսցէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամենայնի, որ ոչ եկիր լիութեսանել զմարդկան հոգիս, այլ կեցուցանել թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում սղորմութեամբդ քո, զի դու միայն ես եռնու անձառ եւ երկրի անգննին. Ի տարրդոյից եւ յեզրս ծագաց աշխարհի սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամայն լրմամբ օրհնեալ 'ի բարձունս եւ քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:



ՀՐԴԱ ՅԱՆԵՍԵՆԻ ԻԱ ՇՐԻ. N°

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅՆ

ԲԱՆ ԴԴ.




ԱՍՏՈՒԱԾ յաւիտենական, բարե-
բալի եւ ամենակալ, զտեղծիչ լու-
սոյ, եւ յօրինիչ գիշերոյ, կեանք 'ի
մահու, եւ յոյս 'ի խաւարի, յոյս
ակնունդոց, եւ երկայնմատիւն
տարախոսելոց: Որ ամենարդեոտ
իմաստութեամբ քո գարձուցանես
Յայդ դատուերս մահու, անուշազ
ձագումն եւ անմուտ արեգափն.
Քանզի ոչ զօրէ ծածկել զբառս տէ-
րութեան քո խաւար գիշերոյ: Ո-
րում կրկնի ծունր երկրպագութեան
ամենայն եղելոց՝ երկնաւորաց եւ
երկրաւորաց եւ սանդարամետակա-

նաց: Որ լսես զհեծութիւն կապե-
լոց, եւ հայիս յաղօթս խոնարհաց,
եւ ընդունիս զինդրուածս նոցա.
Աստուած իմ եւ թագաւոր իմ, կեանք
իմ եւ ապաւէն իմ, յոյս իմ եւ վրա-
տահութիւն իմ, Յիսուս Քրիստոս,
Աստուածդ ամենայնի: Սուրբդ հան-
գուցեալ 'ի հոգիս սրբոց, մխիթե-
րութիւն վշտաց, եւ քաւարան մե-
ղուցելոց. որ դիտես զամենայն յա-
ռաջ քան զլինել նոցա, առաքեա
ղպանպանողական զօրութիւն աջոյ
քո, եւ իրկեա զիս յերկիւղէ զի-
շերի եւ 'ի դիւէ չարէ: Որպէս գի
դ յիշատակ սոսկալի եւ սուրբ քո
անուանդ միշտ համբուրեալ շըր-
թամբք հոգւոյ ըզձութեան չնչոյ,
կեցից պահպանեալ ընդ այնոսիկ որք
կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ: Եւ

'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ զոր
 Աստուածային արեամբ քո ներկեալ
 նորողեցեր, եւ 'ի նոյն շնորհ՝ որ-
 դեզրութեան զմեզ մկրտեցեր, եւ
 'ի փառս պատկերի քո նկարեալ յօ-
 րինեցեր, այսու պարզեւօք Աստ-
 ուածականօք ամաչեցէ սատանայ,
 քակտեցին մեքենայքն, բարձցին
 որողայթքն, պարտեցին մարտուց-
 եալքն, պակասեցին զէնքն սայ-
 րասուրք, մերժեցի մէզն, փարա-
 տեցի խաւարն, մեկնեցի մառա-
 խուղն: Բազուկ քո հովանասցի, եւ
 աջ քո կնքեցէ, վասն զի գթած
 ես եւ ողորմած, եւ անուն քո կո-
 չեցեալ է 'ի վերայ ծառայից քոց:
 Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւովդ սրբով՝
 փառք եւ իշխանութիւն յաւիտեա-
 նքս յաւիտենից. ամէն:

ԱՂԵՐՍ

ԱՌ ՈՌԻՐԱ ԱՌԱՔԷԱԼՍԵ



ԱՆՄԱՀ զառինն հզօրի,
 Որ միշտ զենեալ եւ կենդանի,
 Երկոտասան զառանցդ խմբի,
 Չեզ այս աղերս մատուցանի:
 Սուրբ Պետրոսի եւ Անդրէի,
 Երկուց եղբարց նախակաջի.
 Յակոբոսի, Յովհաննիսի,
 Չկնորս որդիքն Չերեթի.
 Փիլիպպոսի, Բարթոլղիմէի,
 Թովմայի եւ Մատթէոսի,
 Յակոբ Ալփեայ, Թադէոսի,
 Շմաւոնի, Մատաթէի.
 Երկոտասան Առաքելոց,
 Ի Քրիստոսէ պսակելոց:
 Այս են բաղձանք սրտից մերոց,
 Փրկել զմեզ յայսոց պղծոց:
 Եւ լիցի պահապան ծառայիս Աս-
 տուծոյ. ամէն:



Խաչ մեր օգնեա մեզ :

Պարծանք հաւատացելոց 'ի Քրիստոս եւ
դպեալստ սուրբ Խաչին որ երեւեցաւ յԵրու-
սաղէմ յաւուրս Ալեքիի Հայրապետին :
Մայիսի Է :



ԽԱՁՆ Քրիստոնէից յոյս . Խաչն
կուրաց առաջնորդ . Խաչն մոլորե-
լոց դարձուցիչ . Խաչն աղքատաց
մխիթարութիւն . Խաչն մեծատանց
սանձ . Խաչն ամբարտաւանից քակ-
տունն . Խաչն ախոյեան դիւաց .
Խաչն բանսարկուն յաղթութիւն .
Խաչն մանկանց դաստիարակ . Խաչն
աղքատաց մեծութիւն . Խաչն ան-
յուսից յոյս . Խաչն նաւարարաց նա-
ւապետ . Խաչն տագնապելոց հան-
դիստ . Խաչն պատերազմողաց պա-
րիսպ . Խաչն հայր որբոց . Խաչն վե-
րակացու այրեաց . Խաչն անիրաւաց

դատաւոր . Խաչն արգարոց խորհըր-
 դակից . Խաչն նեղելոց հանգիտա .
 Խաչն տղայոց պահապան . Խաչն ա-
 բանց զլուխ . Խաչն ծերոց կատա-
 բումն . Խաչն խաւարելոց լոյս . Խաչն
 թագաւորաց վայելչութիւն . Խաչն
 զէն յաւիտենական . Խաչն բարբա-
 րոսաց ազատութիւն . Խաչն անխը-
 բատից իմաստութիւն . Խաչն անօ-
 բինելոց օրէնք . Խաչն մարգարէից
 քարոզ . Խաչն առաքելոց պատմու-
 թիւն . Խաչն մարտիրոսաց պար-
 ծանք . Խաչն վանականաց պահա-
 պան . Խաչն կուսանաց զգաստու-
 թիւն . Խաչն քահանայից ուրախու-
 թիւն . Խաչն եկեղեցւոյ հիմն . Խաչն
 տիեզերաց զգուշութիւն . Խաչն մե-
 հենից աւերիչ . Խաչն բազնաց կոր-
 ծանիչ . Խաչն ճենճերաց ապակա-

նիչ . Խաչն հրէից գայթակղութիւն .
 Խաչն ամբարշտաց կորուստ . Խաչն
 տկարաց զօրութիւն . Խաչն հիւան-
 դաց բժշկութիւն . Խաչն բոբոտաց
 սրբիչ . Խաչն անդամալուծաց ուղ-
 զիչ . Խաչն պաղշոտաց բժշկութիւն .
 Խաչն քաղցելոց հաց . Խաչն ծարա-
 ւելոց աղբիւր . Խաչն մերկաց վե-
 բարկու . Խաչն անբարբառ բարե-
 խօս ծառայիս Աստուծոյ . ամէն :



ԱՆՈՒԱՆՔ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԱՅՆ ՈՐՔ
ԵՆ ԲԱՐԵՒՍՍ ՎԱՍՆ ՄԵՐ



ԲԱՐԵՒՍՍՈՒԹԵԱՄԲ Աստուածա-
յին սուրբ նշանին, եւ անբարբառ
բարեխօսին Քրիստոսի վասն ազգի
մարդկան, Սրբոյ կենաց Խաչափայ-
տին Քրիստոսի. Աւագակի սուրբ
նշանին. Վարագայ սուրբ նշանին.
Երեւման սուրբ նշանին. Հաղբա-
տայ սուրբ նշանին. Վանկոյ սուրբ
նշանին. Կաղբայ սուրբ նշանին.
Ազինեայ սուրբ նշանին. Սերեխոյ
սուրբ նշանին. Մառառայ սուրբ
նշանին. Գանձասարայ սուրբ նշա-
նին: Եւ Քրիստոսի սուրբ զեղար-
դի. Գետարգել սուրբ նշանին. Ա-
պարանից սուրբ նշանին. Կարմրակ
սուրբ նշանին. Սքանչելագործ սուրբ

նշանին. Ծիծռան սուրբ նշանին.
Աղթամարայ սուրբ նշանին. Սա-
նահնու սուրբ նշանին. Վարոսի
սուրբ նշանին. Կիպրոսի սուրբ նշա-
նին. Կոստանդիանոսի սուրբ նշա-
նին. եւ Տապանակի սուրբ նշանին:
Վրաց Հոռոմոց սուրբ նշանին. Կոս-
տանդնուպօլսոյ սուրբ նշանին. Հա-
պէշու եւ Խպտոյ սուրբ նշանին.
Հացունեաց սուրբ նշանին որ ՚ի դա-
լըստեանն յառաջագոյն. Գայլակլայ
սուրբ նշանին. Հնդու սուրբ նշա-
նին. Կապնկայ սուրբ նշանին. Պի-
ղեռու սուրբ նշանին. Հռիփսիմէի
սուրբ նշանին. Բողու սուրբ նշա-
նին. Սարի սուրբ նշանին: Եւ այլ
ամենայն սուրբ նշանացն որք ընդ-
հանուր արեգերս իցեն սոցին սուրբ
եւ արժանաւոր ազօթիւքն եւ ան-
բարբառ բարեխօսութեամբն ողոր-
մեա ծառայիս քո:

ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ
ՋՈՐ ԱՐՍՐ



Եր քրիստոս բժշկեաց 'ի ժողովրդէնէն բազում հիւանդս . լուսաւորեաց զկոյրս , հալածեաց 'ի մարդկանէ զդեւս , սրբեաց զքորոսս , գրնացոյց զանդամալոյծն որ 'ի բեթհեզդայ անկեալ զնէր երեսուն եւ ութամ . եւ յարոյց 'ի մեռելոց զչօրեքօրեայ մեռեալն . եւ այլ անթիւ ըսքանչեկիս եւ հրաշագործութիւնս արար : Նոյն ողորմութեամբն իւրով հեռի արասցէ 'ի մէնջ զգլխացաւն , զաչաց ցաւն , զականջացաւն , զատամանց ցաւն , զսրտացաւն , զմիջաց ցաւն , զկշտացաւն , զխիթն որովայնի , զծնկացաւն . եւ յամենայն ցեղ ցաւոյ աղատեսցէ եւ օգնական եւ պահապան լիցի ծառայիս Աստուծոյ . ամէն :

Ղերատին յաւելում կրկին հեծութեան նորին հսկողի աւ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ
ԱՍՏՈՒԾՈՅ
ԲԱՆ ԶԴ .



Ա. ԱՐՔԱՅ երկնաւոր , թագաւոր բարձրեալ , Տէր բոլորից , ամենից ազնկալութիւն , ստեղծող տեսականաց , հաստիչ իմանալեաց , պատճառ եղանութեանց , կազմիչ հանդերձելոց , տուիչ լուսոյ , առիթ առաւօտու , պատրաստիչ վաղորդայնի , երեւեցուցիչ երեկորի , տարրիչ խաւարի : Արուեստաւոր բարեհնար , իմաստութեան գործօնեայ , քաւարան օրհնեալ , հալիչ մեղանաց , հալածիչ

ցաւոց , քակտիչ դառնութեանց ,
 պահպանարան հանդստեան , հնարք
 նիրհման , յարմարիչ քնոյ , պարգե-
 ւիչ ննջման : Ծնչոյ յարակարգու-
 թիւն , զգայութեան տեւողութիւն ,
 ցրիչ ցնորից , յեզանակիչ անրջոց ,
 փոխարկութիւն զարհուրմանց , այ-
 լայութիւն տխրութեանց , խափա-
 նիչ խիթմանց , ընդարձակիչ կարծ-
 եաց , համազրութիւն ծիմանց , ա-
 հագնութիւն խարդախմանց , հար-
 ուածիչ դիւաց , փախուցիչ ախաիչ ,
 ընկղմիչ դայթակղութեանց :

Բ. Պաշտպանեա երկնաստեղծ ձե-
 ոամբդ , զօրացո բարձրացեալ քո ա-
 ջողդ , ամիտփեա ամենակալդ թե-
 ւօք , ծածկեա Աստուածեան խնա-
 մօքդ , ամրացո վերակացութեամբ
 վերնայնոցդ : Շուրջանակի պարըս-

պեա գումարտակօքդ անմահից . յա-
 մենուստ պարլիակեա կցորդու-
 թեամբ հրեշտակացդ . վանեա զընդ-
 զիմամարտն իմ զինուորութեամբ զը-
 ուարթնոցդ . պատսպարեա զսասան-
 եալս Աստուածածնիդ մաղթանօք .
 զբանակս անդրանկացդ բարեկար-
 դեա ինձ պահասպան :

Բաց ընդ աչացս դիմաց եւ զմտացս
 իմ տեսանելիս . զգաստ արա ընդ
 ողւոցս եւ զճանրաբեռն կրիցս զան-
 դաղութիւն . վերացո տէր 'ի զգա-
 յութեանցս զմածեալս յիմարութիւն .
 բարձ , միայն բարեգործ , զպատրու-
 ուակիս թանձրութիւն : Ընդ սկըզ-
 բան բերմանս լուսոյ զողորմութիւն
 քո ծագեա . ընդ ելից արեւուն՝ ար-
 դարութեան արեգակնդ 'ի յանձկու-
 թիւն սրտիս մտցէ . ճառագայթ քո

փառացի 'ի յիմաստիցս խորհրդանոց
 ջահեսցի . Խաչիգ տեառնագրութիւն
 ընդ շունչս եւ ընդ մարմինս հա-
 մասփիւռ տարածեսցի : Յանձն առ-
 նեմ քեզ յաւորս՝ զքո յարմարեալ
 տաղաւարս պահպանաւ ոգւոյս որ
 'ի ամին : Զի դու ես Աստուած ան-
 քէննին , առ ամենեւին բաւական եւ
 յամենայնում բովանդակ , օրհնեալ
 յաւիտեանս . ամէն :



Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՑ ԽՕՍԳ ԸՆԴ
 ԱՍՏՈՒԾՈՅ
 ԲԱՆ ԶԹ .



ԱՍՏՈՒԱԾ եւ Տէր , կեանք եւ ա-
 րարիչ , ողորմած , գթած , լոյս , եր-
 կայնամիտ , անոխակալ , մարդասէր ,


ամենագութ , պարգեւատու , վիր-
 կիչ , օրհնեալ , գովեալ , բարեբան-
 եալ : Գարան ամբութեան , պատըս-
 պարան վստահութեան , առանց նեն-
 դութեան բարի , առանց խաւարի
 ճառագայթ , քաւիչ մեղաց , ողջա-
 ցուցիչ վիրաց , անհասանելեաց հը-
 նարք , անմատչելեաց հպաւոր , ան-
 յուսութեան ելք , անուն քո խոս-
 տովանեալ Աստուծոյ Որդի . եւ Հօր
 քո ընդ քեզ հղօրի եւ հնաւորի , եւ
 Հոգւոյդ ամենակալի , եւ ընդ քեզ
 երկրպագելոյ , փառք եւ պաշ-
 տօն դոճաբանութեան՝ յաւիտեանս .
 ամէն :



Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ.

ԱՍՏՈՒԾՈՑ

ԲԱՆ Ղ.



Ա. ԲԱՐԵՅԱՆԵԱԼ Աստուած երկնաւոր , միայն արարիչ , Տէր ամենակալ , մեծութիւն անեղ , գթութիւն օրհնաբանելի , ողորմութիւն խոստովանելի , բարերարութիւն երկրապագելի , խնամակալութիւն պաշտելի , մարդասիրութիւն տօնելի , պահպանութիւն խնկելի : Բարձրեալ անքննին , մերձաւոր կամարար , ապաւէն անկասկածելի , մխիթար սրբտից , վարատիչ լշտաց , ապաքինիչ ցաւոց , սպառումն վճատութեանց , բարձումն պարտեաց , փոխարկիչ կարեաց , կարգաւորիչ կրից , յար-

մարիչ բանից , սանձարկու լեզուի : Շրջադրութիւն շնչոյ , կացուցիչ հագագի , ամիովիչ խորհրդոց , կըրթարան կամաց , արձանացուցիչ յուզմանց , հանդարտութիւն մրրկաց , խաղաղութիւն ծփանաց , որ ունիս գթեւոց ամենընթաց իշխանականխս , եւ իմաստութեամբ նուածեալ առ քեզ դարձուցանես :

Բ. Գոհաբանեալ միշտ երախտաւոր , որ հեզութեամբ անհպարտութեան երկայնամտեալ հանգչիս տենչանօք անճառ հրաչիւք յանձինս սրբոց : Թագաւոր էից համայնից , ամենայնիւ ծանուցեալ գթած , սկզբնահայր եւ նախաշաւիղ ընթացից , ճանապարհ կենաց , որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս 'ի լոյսդ վերին : Զեռնկալու մեծ վստահութեան , որ

ոչ թողացուցանես գայթակղելոյս 'ի վայր կործանել . յուսոյ կերպարան , ճշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց յայտնի երեւեալ . ապաւինութիւն հանգստեան . որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութեան : Ազատութիւն շնորհածիր , որ տաս լիապէս առանձ վտխատրութեան փրկանաց . առատութիւն աննախանձելի , որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս ճօխացուցանես : Պայծառութիւն անստուեր , որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ՝ զթշուառս կրկին բարգաւաճ առնես : Քաւիչ մեղանաց բաղմաց , որ զհերքեալս 'ի փրկութենէ առաջնոյն պայծառութեամբ նորոգեալ՝ վերջատին վայելչացուցանես : Հնարաւոր

զիւրահաս առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալեկք վստահութեան առ խոստացելոցն վայելս . երանութիւն անձկալի , յոր զլինդանութիւն շնչոյս լըքանելն է ախորժելի , զի զքեզ գըտից կենդանի : Կամք անփոխադրելի , առ 'ի քաւութիւն գերուոյս զօրացեալ ամենագովելի . անսխալելի դեղ կենաց , որ եւ մեռելոց՝ բնաւին եղծելոց՝ առնես զսքանչելիս : Ամենաստեղծ աներկբայելի , որ ըզհուրբ կիպեալն , եւ զհողմով հոսեալըն , եւ զժանեօք գազանաց ծախեալն , 'ի քթթեկական նովին հիւթականութեամբ անպակաս յարուցանես : Անհաւասար համարձակութիւն , յորում Աստուածօրէն պանծանօք պարծեալն է իրաւացի :

Գ. Հայեաց Տէր, յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենալիործան վրտանդ նեղելոյս, եւ արա անդորր հանգստական դիւրաւոր 'ի բազմատափնապս հեծութենէ: Եւ զյարուցեալ զուժարս սատակչացն, եթէ սպառազէնք այսական դժնեայ հրնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց տգեղ եւ քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց եւ փստից վասնիչ եւ կորստական նշմարանք, մերժեսցես, հանցես, հատցես. խափանեսցես եւ հալածեսցես հեռի սահմանաւ իսպառ տարագրեալ անդարձ որոշմամբ վերստին կորստեանն. եւ կառուցես կացուցես նպատակ կենաց եւ ամուր մահարձան զնշան խաչիդ ապաւինելոյս 'ի քեզ փրկութիւն: Եւ

յայսմ անպարտ եւ անպատիր եւ անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան, լուծցին որոգայթքն դաղտնածածուկ սատանայականք, կապտեսցին մեքենայքն, վատնեսցին դայթակղութիւնքն, խայտառակեսցին հաղբիցն գրութիւնք, յայտնեսցին երեւոյթք որսոյն, զբացին նենդողին ծուղակք, վերասցին վարժին վերարկուք, տոչորեսցին որոմանցն բոյսք, նղովեսցին բռնաւորին չարաբանութիւնք, կըտրեսցի լար խաբէութեան 'ի մահ որսողին: Պարսեսցին սպարողին բանսարկութիւնք, պակասեսցին զէնք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուղեսցին սաղրողին պատրաստութիւնք, արձակեսցին տոռունք տափնապողին: Այլայլես-

ցին սուտ կերպարանք կեղծաւորին ,
 սատակեսցին խորխտականացն խիտ
 յարձակմունք , ցրուեսցին կցորդու-
 թիւնք կերչացն , բաժանեսցին ա-
 զինք աւազակացն , քայքայեսցին
 բոյլք բարբարոսացն , քանդեսցին
 ամրոցք ապստամբողացն , արդելցին
 ամպրոպք յանդգնելոցն , փարատես-
 ցին փորձողին անձրեւք , հալեսցի
 եւ ցամաքեսցի եղեամն աղանդաւո-
 րին : Խորտակեսցի եղջիւր գոռողին ,
 մանրեսցին ամբառնալիք զրոշիցն
 կերպարանաց , փշրեսցին ամբարնա-
 ւաճու թիւնք հպարտացելոցն , նա-
 հանջեսցին զիմեցմունք ճակատե-
 լոցն , քակտեսցին միաբանութիւնք
 զօրացն Բելիարայ՝ թէ անմարմինք
 եւ եթէ մարմնաւորք , փախիցեն
 ընդ նոյն ճանապարհ մի՝ ի շաւղաց


հետոց յեօթն տարակոյտ , ՚ի գուքն
 քնձ փորեալ ինքեանք ընկճեսցին :
 Յեղանակեսցին ձմերունք ճանձրա-
 ցուցչին , հատցի կապն կցորդու-
 թեան մշտաջան աւազակին . նույ-
 ՚լացի մտացս կայից համբոյր շողո-
 քորթին . ընդ միջեալ մեկնեսցին նե-
 սաճգութիւնք նեղչին . կացցէ ՚ի
 սասանման նաւ խարդախողին . խը-
 լեսցին յարմատոց անտի առամունք
 խածանողին :

Գ. Ասան փայտիք օրհնութեան կե-
 նաց յորում պրկեցար , Աստուածք
 անբմբռնելի . յիշատակաւ բեւեռացդ
 որով ՚ի գործի մահուն մածուցար ,
 արարիչդ երկնի եւ երկրի . արեամ-
 բըդ տէրունականաւ որով զփշապն
 մեծ կարթիւ ածեալ որսացար . լեղ-
 ւոյն դառնութեամբ զոր արբեալ

ղղեղատուութիւն կորուսչին ար-
տաքս հեղեր : պատմաբանութեամբ
ըղձական ճատիւք կրից : սարսափել-
եաց , որով զլրբութիւն հակառա-
կողին ըմբերանեալ ամաչեցուցեր .
անուամբդ անհասկանալու ամենայն
նիւ անթարգմանելոյց , յորմէ դո-
ղան եւ դասապարտին սովապեալ
սաստիկ սարսափմամբ բնութիւնք
ամենայն երեւութից եւ աներեւու-
թից , եղիցին այս ամենայն պար-
զեւք շնորհաց խոտտովանելոյս 'ի
պաշտպանութիւն , 'ի բժշկութիւն
եւ 'ի քաւութիւն : Եւ մահաբեր դառ-
նաթոյն յձին , եւ որ 'ի նմա աղղեաց
տիկեբաղաւ չարութիւնն , 'ի սա-
տակունն եղիցի նորին . նոյն ինքն
'ի կորուստ եւ յանբժշկական հար-
ուած տանջանայն սովաւ մամնեա-

ցի , կապեացի եւ ըմբռնեացի : Եղի-
ցի ողորմութիւն ստեղծողիդ ընդիս ,
եւ շունչ ողւոյս իմ ընդ քեզ ան-
բաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի :
Ե . Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս
ձայնի մարդմանաց զոչման , աղօթից
հարցման , ծերոյ եւ տղայոյ , կուսի
եւ երիտասարդի . եւ եթէ յաղախ-
նաց ոք պաղատեսցի Աստուածասի-
րաբար , հաւասարապէս անաչառու-
թեամբ ընկալցին 'ի քէն մասն եւ-
րանութեան պարտուց աղատու-
թեան , հաստեալ վերստին յանարա-
տութիւն նորոգ մաքրութեան , նը-
կարեալ դարձեալ զքոյդ կերպարան
անփոփոխելի : Ահա տիրապէս , հը-
նարաւոր զօրեղ , անպատու մանաս
անխմանալի , տեսցես աստանօր 'ի
հառաչանս կողկողանաց այսր հե-

ծութեան , որ 'ի բողոքից շրթանց
 ընծայեալ քեզ մատուցանի , վասն
 Հօր քոյ երկնաւորի եւ բարերարի ,
 եւ Հոգւոյդ սրբոյ փառակցի եւ կեն-
 զանատուի . Աստուածածնիդ բարե-
 խօսութեամբ , եւ խնդրուածովք ա-
 մենայն սրբոց Զի դու ստեղծեք զա-
 մենայն , եւ 'ի քէն եղևն ամենայնք ,
 եւ դու տիրես ամենայնի . եւ քեզ
 փառք յամենեցունց , միզ յիսկու-
 թենէ անժամանակ Երրորդութեա-
 նըդ , զուզակցասպէս փառաւորեալ
 յանբանս , եւ յաւիտենից յաւիտեա-
 նըս . ամէն :



Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻՑ ԽՕՍԻ ԸՆԴ

ԱՍՏՈՒԾՈՑ

ԲԱՆ ԳԵ .



Ա. ԱՐՏԻՑԱՆ արդար , ճառագայթ
 օրհնեալ , լուսոյ կերպարան , փա-
 փաք անձկութեան , բարձրեալ ան-
 քնին , զօրեղ անոպատում , բարւոյ
 բերկրութիւն , յուսոյ տեսութիւն ,
 զովեալ երկնաւոր , թագաւոր փա-
 աաց , Քրիստոս արարիչ , խոստովան-
 եալ կեանք : Եւ արդ՝ զթերութիւն
 վրիպանաց բազմասխալ ճայնի եղ-
 կելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մա-
 սուսչես յաղերս հաճութեան Հօր
 քում բարձրելոյ : Որ վասն իմ 'ի
 փորձ եկիր անիծից , կերպարանեալ
 զիմ նամանութիւն , ամենեւին կենաց

օրհնութիւն , վերնոց եւ ներքնոց
բարեխնամող տեսուչ համայնից : Զի
թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ ,
Աստուած եւ Տէրդ բոլորեցուն ո՞ր-
չափ հաճեցիս առաւել եւ այժմ վը-
տանդաւորս կրից կարեկցել , ընդ
իմ պարտաւորիս միշտ աղօթելով
աղգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ
առ համապատիւդ քո Հայր :

Բ. Եւ վասն արեանդ պատուականի
միշտ մատուցելոյ 'ի հաճութիւն կա-
մաց առաքչիդ , բարձցին վտանգք մե-
ղուցեալ դատապարտելոյս . թողցին
պարտիքն , 'ապաքինեսցի ամօթն ,
մոռացին պատկառանքն , բարեգոր-
ծեցին դատակնիքն , սատակեսցին
որդունքն , վերացի լալն , հանդար-
տեսցէ կրճումն ատամանցն , սպա-
ռեսցին ողբքն , հատցին արտասու-

քըն , մերժեսցի սուղն , հաւածեսցի
խաւարն , վատեսցի հուրն սասա-
կութեան , հերքեսցին տանջանա-
բանքն բազմօրինակք :

Գ. Եկեսցին դթութիւնք կամողիդ
եւ պարզեւողիդ կենաց ամենից .
ծաղեսցի լոյսդ , արագեսցէ փրկու-
թիւնդ , հասցէ օգնութիւնդ , ժա-
մանեսցէ այցելութիւնդ , կանխեսցէ
ցօղդ ողորմութեան , յառաջեսցէ ,
արբուսցէ , զանդաստանս պասքեալ
անկեալ ոսկերացս թշուառութեամբ
'ի վրհն մահու . ծաղկեցուսցէ սլա-
ղաքերեսցէ բաժակդ երկնաւոր ար-
եան կենարարիդ զերկինս խնամեալ
աւուրն լուսոյ . որ անծախապէս
միշտ պատարագի յիշատակ կենաց
փրկութեան հոգւոց ննջեցելոց : Զի
աւանայնիւ մահացեալ հոգիս մարմ-

նովն մեղաց չնորհօք քո , գթած , 'ի
քեզ զօրացեալ քեւ նորոգեցայց ,
զատեալ 'ի մեղաց անմահ կենդա-
նութեամբ 'ի յարութեանն արդա-
բոց , Հօր քում օրհնեցեալ : Բնդ ու-
րում քեզ փառք եւ Հոգւոյդ սրբոյ
բարերանութիւն վայելչական դո-
հութեամբ , այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից . ամէն :



ԳՈՂԱՍԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԵՄԵՆՍ




ԳՈՂԱՍԲԱՄԲ դքէն , ո՛վ Ամենա-
սուրբ երրորդութիւն , Հայր եւ Որ-
դի եւ Հօգիդ սուրբ , որ ասացեր
արասցուք մարդ ըստ պատկերի մե-
րում , եւ առեր հող յերկրէ , եւ
փշմամբ օրհնեալ շնչոյ քո գոյացու-
ցեր զմարդն Ադամ . վասն որոյ օրհ-
նեմք զմեծութիւն քո : Գոհանամք
դքէն , Տէր , որ զմարդն Ադամ զար-
դարեցեր եօթնաբփեան չնորհօք եւ
երկասասան փառօք . վասն որոյ օրհ-
նեմք զչնորհս քո : Գոհանամք դքէն ,
Տէր , որ 'ի դրախտն եղեմ եղեր զԱ-
դամ անճառելի խնդութեամբ , եւ
հիանրաչ խնդութեամբ . վասն որոյ
օրհնեմք զարարչութիւն քո : Գոհա-

նամք զքէն , Տէր , որ յետ պատ-
 րելոյն Ազամայ՝ Յարդեղայոս անուն
 օձէն , եւ արտաքսելոյն 'ի դրախտէն ,
 որով 'ի դժոխս գրաւեցաւ , ազատե-
 ցեր . վասն որոյ օրհնեմք զփր-
 կութիւն քո : Գոհանամք զքէն



Տէր , որ առաքեցեր զանդրանիկն
 քո զՄիածին Յանն , որ վասն մերոյ
 փրկութեան խաչեցաւ , թաղեցաւ ,
 յարեաւ , համբարձաւ . վասն որոյ

օրհնեմք զմեծ մարդասիրութիւն քո :
 Գոհանամք զքէն , Տէր , որ զսուրբ
 մարմին եւ զսուրբ արիւն նորա



պարդեւեցեր մեզ կերակուր հոգւոյ
 եւ կենդանացուցիչ . վասն որոյ օրհ-
 նեմք զպարդեւս քո :

Գոհանամք զքէն , Տէր , որ զմկրտու-
 թիւն ուսուցեր 'ի Յորդանանէ եւ
 կոչեցեր 'ի խաւարէ 'ի լոյս , եւ ե-
 սուր զորդէ գրութիւնն վերին . վասն
 որոյ օրհնեմք զչնորձաբաշխութիւն

քո : Գոհանամք զքէն , Տէր , որ եօթմըն խորհուրդ եկեղեցւոյ կազմեցաւ 'ի քոյինդ շնորհէ , եւ խոստովանութեամբ թողութիւն շնորհեցեր . վասն որոյ օրհնեմք զառատապարզ եւ զթուօթիւն քո : Գոհանամք զքէն , Տէր , որ անձրեւ եւ ցող տաս երկրի , եւ բուսանի հաց եւ հանդերձ եւ ամենայն մեղեաց կերակուր . վասն որոյ օրհնեմք զբազմաբաշխ ողորմութիւն քո : Գոհանամք զքէն , Տէր , որ տաս յաջողութիւն վաստակոց մերոց , եւ զշնորհս արուեստաւորաց . վասն որոյ օրհնեմք զբազմարուեստ տեսչութեան քո : Գոհանամք զքէն , Տէր , որ միշտ քաղցրութեամբ նայիս յարարածս քո , եւ օր ըստ օրէ շնորհես զբազմազեղ ողորմութիւն քո . վասն որոյ

օրհնեմք զանչափ զթուօթիւն քո : Գոհանամք զքէն , Տէր , որ մեղաւորաց եւ զզջացելոց թողութիւն շնորհես , ներես , եւ ոչ եղծանես . վասն որոյ օրհնեմք զանյիշաչարութիւն քո : Գոհանամք զքէն , Տէր , որ զեղանակս տարւոյն , զամառն եւ զձմեռն , զաշունն եւ զգարուն , արարեր ըստ բնութեան մերում . վասն որոյ օրհնեմք զարարչազործութիւն քո : Գոհանամք զքէն , Տէր , որ յայսմ ամի եւս ապրեցուցեր ըզմեզ անվրդով , անմահ եւ անկասկած . վասն որոյ օրհնեմք զտէրութիւն քո : Գոհանամք զքէն , Տէր , որ զմեզ 'ի մահտարածամէ եւ յամենայն պատահարաց պահեցեր . վասն որոյ օրհնեմք զպահպանութիւն քո : Գոհանամք զքէն , Տէր , որ 'ի հրկիզու-

թինէ , 'ի հեղեղէ , 'ի շարժմանէ ,
 'ի կայծականց , 'ի խորշակէ եւ 'ի
 սատակմանէ ապրեցուցեր . վասն ու-
 բոյ օրհնեմք զապաւինութիւն քո :
 Գոհանամք զքէն , Տէր , որ օրհնեցեր 'ի
 լերինն Չիթինեաց զՎաթողիկոսունս ,
 զՊատրիարքունս եւ զՅարկոպոսունս
 որ ճրագ եւ լոյս եղեն աշխարհի . վասն
 որոյ օրհնեմք զչնորհարաշխութիւն
 քո : Գոհանամք զքէն , Տէր , որ ըն-
 ձեռեցեր աղամեանս բնութեան քա-
 հանայութիւն որ հրեշտակաց էր
 կարգ , յազագս թողութեան յանցա-
 նաց մերոց . վասն որոյ օրհնեմք ըզ-
 փրկութիւն քո : Գոհանամք զքէն ,
 Տէր , որ զսարկաւազունս , զախա-
 գողս եւ զՅանընկալս սահմանեցեր .
 վասն որոյ օրհնեմք զլուսաւորութիւն
 քո : Գոհանամք զքէն , Տէր , որ ըզ-

բանաւոր հօտ , զժողովուրդս քո ,
 ընկալեալ ունիս 'ի ծոց քո , եւ որ-
 պէս զտապանն Նոյեան ազատես 'ի
 հեղձմանէ մեզաց . վասն որոյ օրհ-
 նեմք զզարմանահրաշ զթութիւն քո :
 Գոհանամք զքէն , Տէր , որ զմեղու-
 ցեալ ժողովուրդն ոչ սլատես 'ի
 տան քում քաւարանի , այլ զգար-
 ձումն նկատես . վասն որոյ օրհնեմք
 զերկայնամտութիւն քո . եւ վասն մե-
 ծի եւ բարձու ողորմութեան քո ,
 խոնարհեցո , Տէր , զունկն քո 'ի ժա-
 մուս յայտփիկ եւ տուր մեզ յերկնից
 'ի սրբութեանդ՝ շնորհ , ձիր , ողոր-
 մութիւն , քաղցրութիւն , կարողու-
 թիւն , մեղաց թողութիւն , առա-
 տութիւն , մեծութիւն , աշխարհիս
 խաղաղութիւն , լանդութիւն , լու-
 սաւորութիւն , հաւատս , յոյս , սէր ,

մաքրութիւն, առաքինութիւն, բարե-
 կաց լիութիւն, հանդարտութիւն,
 անդորրութիւն, զօգնութիւն, հաշ-
 տութիւն եւ օրհնեալ արքայութիւն:
 Եւ քեզ ընդ Որդւոյ, եւ ընդ սուրբ
 Հոգւոյդ վայելէ փառք եւ սլաախ-
 յաւիտեանս . ամէն :

Վ Ե Ր Զ

ԵՐԵՄ

Հաւատով խոստովանիմ եւ երկիր . . . 9

Ալօթք սրահպանութեան 21

— Վասն կապանաց դիւաց եւ կախար-
 դաց տղանդաւորաց եւ վասն դատա-
 տանի յաջողելոյ 40

Աւետարան Մատթէոսի 45

— Մարկոսի 47

— Ղուկասու 51

— Յովհաննու 55

Դարձ կիսալիանոսի Հոյրաղեօին . . . 57

Ալօթք Երանելոյն Յովհաննու Գառ-
 նեցւոյ, ասացեալ առ սուրբ Աստուա-
 ծածինն 77

— Նորին, վասն ճանապարհի 82

Ազէրս Վասն դաւակ ծնանելոյ 84

— Առ սուրբ Ստեփաննոս նախավկայն 87

Աղթք Զօրաւոր, առ երկնային զօրոն 88

— Առ սուրբ զինուորս Քրիստոսի . . 90

— Վասն աղան չարի եւ լեղուի չարի . 91

— Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի . . . 92

Մտ զԹանժ առ Սուրբ Լուսաւորիչն
 մեր 95

Մտ թժ Լու գրան սուրբ եկեղեցւոյ
 Սրբոյ Յովհաննու Ոսկեբերանի . . . 96

Բան Սրբոյն Գրեգորի Նարեկացւոյն
 ընդդիմամարտ դիւաց 97

Լնկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած 101

Բրդի Աստուծոյ կենդանոյ օրհնեալ 104

Բասուած յառ խանական, բարերար 106

Մղերս առ Սուրբ Առաքեալն 109

Մտ ծանժ հաւասարեցոյ ՚ի Քրիստոս
 և գովեստ Սուրբ Խաչին, որ երեւե-
 շաւ յԵրուսաղէմ յառաքալիւրդի
 Հայրապետին 111

Լնուանք Սուրբ Նշանացն որք են բա-
 րիստոս վանն մեր 114

Հլաշագործութիւն Քրիստոսի զոր
 ա՛ար 116

Բրբայ երկնաւ որ թաղաւ որ բարձրեալ 117

Աստուած և Տէր, կեանք և աղարկչ 120

Բարերանեալ Աստուած երկնաւ որ 122

Մրդակն աղգար, ճառագայթ . . . 155

Կոհարանութիւն առ երկինս 157

10m

0014995

2018

2001

« Ազգային գրադարան



NL0014995

